Յ. Վ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Ա. Հ. ԼՈՒՍԻՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

4

Դասագիրք հանրակրթական
հիմնական դպրոցի
չորրորդ դասարանի համար

Վերահրատարակություն

Նկարիչ՝ Արա Բաղդասարյան

Երաժշտական ստեղծագործությունների
համացանցային հղումներով

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2020

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.167.1:78(075)
ԳՄԴ 85.31 g72
Յ 671

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.

www.zangak.am/9789994115976

Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

Յուզբաշյան Յ. և ուրիշներ
Յ 671 Երաժշտություն 4: Հանրակրթական հիմնական դպրոցի չորրորդ դասարանի դասագիրք / Յ. Վ. Յուզբաշյան, Ա. Ա. Փահլևանյան, Ա. Հ. Լուսինյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2020.— 96 էջ:

ՀՏԴ 373.167.1:78(075)
ԳՄԴ 85.31 g72

ISBN 978–99941–1–597–6

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2020

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Նկարիչ և գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Նվարդ Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Արևիկ Հակոբյանի
Ժագ Թոփալագյանի
Համակարգչային մուտքագրումը՝ Սուսաննա Ավետիսյանի
Նոտաների համակարգչային շարվածքը՝ Վալենտինա Լուսինյանի
Նոտաների խմբագրումը և
երգերի երկձայն մշակումը՝ Արեգ Լուսինյանի

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐ

Էջ 6՝ Հայաստանի ազգային արխիվ, էջ 11՝ Էդուարդ Թադևոսյան, էջեր 26, 41, 43, 58՝ «Զանգակ» հրատարակչության արխիվ, էջեր 32, 35, 42, 50, 60, 52, 64, 69, 70՝ Ս. Առաքելյան, էջ 39՝ Մ. Սարյան. «Ռոմանոս Մելիքյան», էջ 44՝ Մ. Սարյան. «Ալեքսանդր Հարությունյան», էջ 46՝ Մ. Սարյան. «Էդվարդ Միրզոյան», էջ 48՝ Մ. Սարյան. «Ղազարոս Սարյան», էջ 52՝ Ա. Լուսինյան, էջ 68՝ www.president.am

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ
Տառատեսակը՝ «Արփի»: Պատվեր՝ ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ–20/24
Տպաքանակը՝ 35 801

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

ՍԻՐԵԼԻ՛ ԵՐԵԽԱՆԵՐ

4–րդ դասարանի դասընթացին դուք կծանոթանաք հայ ազգային, ինչպես նաև այլ ժողովուրդների երաժշտությանը:

Կհամոզվեք, որ երաժշտությունն այն լեզուն է, որն առանց թարգմանության հասկանալի է տարբեր ազգության մարդկանց: Երաժշտությունը մի բարեկամական կամուրջ է, որով դուք կկարողանաք հաղորդակցվել և ճանաչել շատ ժողովուրդների, տեսնել և ընկալել գեղեցիկն ու բարին:

Ձեզ բարի՛ երթ երաժշտության աշխարհում:



Մարտիրոս Սարյան. «Հայաստան»

ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ երաժշտությունը, ինչպես Կոմիտասն է ասում, «այնքան հարազատ է ու ազգային և այնքան ինքնուրույն է ու ինքնատիպ, որքան իր լեզուն ու գրականությունը»:

Յուրաքանչյուր ժողովուրդ, խոսակցական լեզվից բացի, ունի նաև երաժշտական լեզու: Յուրաքանչյուրի սուրբ պարտքն է լավ իմանալ իր ժողովրդի թե՛ մայրենի և թե՛ ազգային երաժշտության լեզուն:

Ազգային երաժշտությունը հայկական ժողովրդական երգը և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններն են: Դուք կծանոթանաք հայկական ժողովրդական երգի տեսակներին, հայ և այլազգի կոմպոզիտորների ժողովրդական երգերի մշակումներին և ժողովրդական ոգով նրանց ստեղծած առանձին երաժշտական ստեղծագործություններին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ

Ժողովրդական երգը ստեղծում է ժողովուրդը: Բազմազան ու հարուստ է հայկական ժողովրդական երգը: Դարերի ընթացքում ժողովուրդն այն փոխանցել է սերնդեսերունդ, հղկել ու զարգացրել: Այսօր էլ լսելով դարերի խորքից եկող հայ ժողովրդի երաժշտությունը՝ դուք հաղորդակից եք դառնում մեր նախնիների հուզաշխարհին ու մտքերին:

«Հո՛յ, Նազա՛ն» երգը պարային բնույթի է: Այն **պարերգ** է: Պարերգերում մարդն իր զգացմունքներն արտահայտում է միաժամանակ և՛ երգելով, և՛ պարելով:

Պարերգի կատարման ձևը շուրջպարն է: Պարերգը հայ ժողովրդական երաժշտական արվեստի ամենատարածված և սիրված տեսակներից է:

Պարերգերը կատարվում էին ամենատարբեր առիթներով՝ հարսանիքների, ուխտագնացությունների, ժողովրդական տոնախմբությունների ժամանակ, աշխատանքից հետո, հանգստի պահին և այլն:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Հո՛յ, Նազա՛ն» ժողովրդական պարերգը:

Կատարեք

«Հո՛յ, Նազա՛ն» հայկական ժողովրդական պարերգը կարելի է կատարել մենակ կամ խմբով:

Սովորեք

Սովորեք «Հոյ, Նազա՛ն» և «Օրոր» հայկական ժողովրդական երգերը։

ՀՈ՛Յ, ՆԱԶԱ՛Ն

Մեներգիչ Հոյ, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Խումբ Ջա՛ն, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ։
Նազա՛ն, դու բարո՛վ եկար,
Կանաչ սարերով եկար,
Կարմիր սոլերով եկար։

Մեներգիչ Նախշուն-թև թիթեռնիկ ես,
Խումբ Հոյ, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Մեներգիչ Ծաղկան ծիծեռնիկ ես,
Խումբ Ջա՛ն, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ։
Նազա՛ն, դու բարո՛վ եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր-խոր ձորերով եկար։

Մեներգիչ Գարնան սիրուն ծաղիկ ես,
Խումբ Հոյ, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Մեներգիչ Ինձ համար աղունիկ ես,
Խումբ Ջա՛ն, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ։
Նազա՛ն, դու բարո՛վ եկար,
Կանաչ սարերով եկար,
Կարմիր սոլերով եկար։

«Հոյ, Նազա՛ն» և «Օրոր» երգերը մեկը մյուսից տարբերվում են տեմպով, բնույթով և բովանդակությամբ։ «Հոյ, Նազա՛նը» աշխույժ պարերգ է, իսկ «Օրորը»՝ քնքուշ, դանդաղ երգ։ **Օրորոցայինը** հիմնականում երգում է մայրը, երբ քնեցնում է իր բալիկին։ Օրորոցային երգերի միջոցով է, որ մանուկը առաջին անգամ շփվում է երաժշտության հետ և ազգային ոգու ճանաչողություն ստանում։

ՕՐՈՐ

Հայկական ժողովրդական



Դան, դան, դանի, դանդանա,
Դան, դան, մինչև քնանա,
Օրոր չուզեր խեղճ մանուկ,
Սիրտ պիտի որ դիմանա:

Դան, դան, դանի, դանդանի,
Կարմիր խնձոր նմանի,
Իմ անուշիկ բալիկի
Քունը արդեն կտանի:

Կատարեք

Երգը կատարեք նոտաներով, ապա երգեք բառերով: Նախ յուրաքանչյուր ձայնախումբ երգեք առանձին–առանձին, ապա՝ երկու ձայնը միասին:

ԿՈՄԻՏԱՍ
(1869–1935)

Եղիշե Թադևոսյան. «Կոմիտաս»

Կոմիտասի անունը թանկ է ու հարազատ յուրաքանչյուր հայի համար: Կոմիտասի մասին այսպես է արտահայտվել հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը. «Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է, նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը»:

Կոմիտասը ծնվել է 1869 թվականին Փոքր Ասիայի Քյոթահիա քաղաքում: Նա վաղ հասակում կորցրել է ծնողներին: Լավ ձայն և երաժշտական ընդունակություններ ունեցող տղային ուսման են տվել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո ստացել է Կոմիտաս անունը՝ 7–րդ դարի եկեղեցական գործիչ, երգաստեղծ Կոմիտաս Աղցեցու պատվին:

Ուսումը շարունակելու նպատակով 1896 թ. Կոմիտասը մեկնել է Գերմանիա: 1899 թ. ավարտելով ուսումը՝ նա վերադարձել է Էջմիածին և աշխատանքի անցել Գևորգյան ճեմարանում՝ որպես երաժշտության ուսուցիչ: Միաժամանակ Կոմիտասը հավաքել ու մշակել է հայկական ժողովրդական երգեր: Նա համերգներով հանդես է եկել Բեռլինում, Վենետիկում, Շվեյցարիայում, Փարիզում, Եգիպտոսում, Պոլսում և այլուր:

Մեծ է Կոմիտասի դերը հայ ազգային երաժշտական մշակույթի զարգացման գործում: Նա հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից է: Այժմ նրա անունով է կոչվում Երևանի պետական կոնսերվատորիան:

Ունկնդրեք

*Ունկնդրեք և ձայնակցեք «Երկինքն ամպել է» հայկական ժողովրդական երգը մեներգչի կատարմամբ: Այն պատկանում է հայկական ժողովրդական **քնարական** երգերի շարքին:*

ԵՐԿԻՆՔՆ ԱՄՊԵԼ Է

Կոմիտաս



Երկինքն ամպել է,
Ի՜նչ անուշ թոն է,
Գամ դռնեն անցնեմ,
Ախպերս հոն է:

Երկինքն ամպել է,
Գետինը թաց է,
Զանեն քնել է,
Թիկունքը բաց է:

Երկինքն ամպել է,
Գետին՝ շաղերով,
Ես վարդ եմ քաղել
Անուշ տաղերով:

Ունկնդրեք

Նորից ունկնդրեք և ձայնակցեք «Երկինքն ամպել է» երգը Կոմիտասի մշակմամբ և երգչախմբի կատարմամբ: Ապա երգը կատարեք նոտաներով, այնուհետև սովորեք բառերով:

Երգը սովորելիս ուշադրությունն դարձրեք մի քանի հնչյունները մեկ վանկով ճիշտ կատարելու վրա: Երգեք արտահայտիչ, բառերն արտասանեք հասկանալի, ձայնավորները կատարեք երկարաձիգ, իսկ բաղաձայնները՝ կտրուկ, հստակ:

«Երկինքն ամպել է» երգը ունկնդրեք նաև Կոմիտասի անունը կրող լարային քառյակի կատարմամբ:

Ունկնդրեք

Կվարտետը լատիներեն բառ է, որը նշանակում է չորս նվագողներից կամ երգիչներից կազմված խումբ՝ քառյակ: Լարային քառյակն ընդգրկում է հետևյալ նվագարանները՝ երկու ջութակ, մեկ ալտ, մեկ թավջութակ: Կվարտետ է կոչվում նաև այդ կազմի համար գրված բազմամաս ստեղծագործությունը:

Կոմիտասի անվան լարային քառյակը հիմնադրվել է 1925 թվականին:

Հարցեր և առաջադրանքներ

- Ինչ է ազգային երաժշտությունը:
- Հայկական ժողովրդական ինչ երգեր գիտեք:
- Ինչ գիտեք Կոմիտասի մասին:
- Ինչ նվագարաններից է կազմված լարային քառյակը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Ըստ Կոմիտասի՝ իսկական ժողովրդական երգը գյուղի աշխատավորի ստեղծած երգն է, որը կոչվում է **գեղջկական** երգ:

Հայկական ժողովրդական երգերում մեծ տեղ են գրավում **աշխատանքային** երգերը: Այդ երգերից են հորովելները, կալի և քաղհանի երգերը: Աշխատանքային երգեր են «Սանդի երգը», «Խնոցու երգը», «Ճախրակի երգը» և այլն:

Մարտիրոս Սարյան. «Հորովել»

Ունկնդրեք

Ունկնդրեք և սովորեք «Քաղհան» հայկական ժողովրդական երգը:

ՔԱՂՀԱՆ

Կոմիտաս



Գարնան գութան հանեցի,
Յա՛ր, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Արտը բամբակ ցանեցի,
Սոնա՛ յար, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Քաղհան կանեմ հո բարով,
Յա՛ր, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Տոլմա կեփեմ բիբարով,
Սոնա՛ յար, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Աշնան անի լավ օրեր,
Յա՛ր, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Բամբակ քաղեմ նուբարով,
Սոնա՛ յար, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Երգը կատարեք երկձայն: Երգեք թեթև, սահուն: Մեկ վանկով լիգայով միացված չորս հնչյունները երգեք կապակցված:

Երգեք նոտաներով:

Կատարեք

ՃԱԽՐԱԿԻ ԵՐԳԸ

Հայկական ժողովրդական

Չափավոր, պարային



Ոստանա[1] բալաք[2] սարեր,
Չեմ կանա ճախրակ մանել,
Ճախրակի ոտ, գյո[3], ուռ[4] ի,
Ճախրակ մանող, գյո, ծուռ[5] ի:

Ճախրակի ոտ, գյո, բարդ[6] ի,
Ճախրակ շինող նամարդ[7] ի,
Ճախրակի ոտ, գյո, նուշ ի,
Ճախրակ մանող անուշ ի:

Երգն ունի եռամաս չափ: Յուրաքանչյուր մասն ունի **թի** տևողությունը: Երգի երկու ձայնաբաժինները սովորելուց հետո փորձեք երգել երկձայն:

1. Ոստան — տեղանք Վասպուրականում
2. Բալաք — չալ, բազմագույն
3. Գյո — ահա
4. Ուռ — ուռենու փայտ
5. Ծուռ — խենթ
6. Բարդ — բարդենու փայտ
7. Նամարդ — տմարդի

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երաժշտական հնչյունների տևողությունները, բացի ռիթմի վանկային անուններից, ունեն նաև թվային անուններ: Այսպես, օրինակ՝ ամենաերկար տևողության հնչյունը կոչվում է *ամբողջ* կամ *չորս քառորդ* (4/4) և ունի չորս զարկ կամ չորս բախում.

𝅝 = թա–ա–ա–ա
1 2 3 4



𝅗𝅥 = թա–ա տևողության նոտան կոչվում է կես կամ երկու քառորդ (2/4) և ունի երկու զարկ կամ երկու բախում.

𝅗𝅥 = թա–ա
1 2

♩ = թա տևողության նոտան կոչվում է քառորդ (1/4) և ունի մեկ զարկ կամ մեկ բախում.

♩ = թա
1

Մեկ **թա** տևողության մեջ կա 2 **թի** տևողություն:

♪ = թի տևողության նոտան կոչվում է ութերորդական կամ 1/8: Երկու ութերորդական տևողությունները կատարվում են մեկ զարկի կամ մեկ բախման ընթացքում.

♪♪ = թի–թի

Եթե աղյուսակի տեսքով ներկայացնենք **ամբողջ** տևողության նոտան, կտեսնենք, որ այն ընդգրկում է ձեր իմացած բոլոր տևողությունները.



ԼՈՐԻԿ

Ժողովրդական երգ



Բուն է դրել մեջ քարերուն,
Իմ խորոտի՛կ լորիկ,

Ձեն է տալիս յուր ճագերուն,
Իմ խորոտի՛կ լորիկ:

Հարցեր և առաջադրանքներ

- Աշխատանքային ինչ երգեր գիտեք:
- Ստեղծեք ռիթմական նվագակցություն և նվագակցեք «Ճախրակի երգին»:
- Ասացեք ինչյունների տևողությունների թվային անունները:
- Դրանք կատարեք ռիթմի վանկերով:

ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ծիսական երգերը նվիրված են ժողովրդական ավանդույթներին, արարողություններին: Դրանք հարսանեկան, տարբեր ծեսերին ու տոնակատարություններին՝ Համբարձմանը, Վարդավառին, Բարեկենդանին, Զատկին, Սուրբ Ծնունդին, Տյառնընդառաջին նվիրված երգերն են:

Հարսանիքի օրերին հարսին ու փեսային թագուհի ու թագավոր էին կարգում, տոնական զգեստներ հագցնում, զարդարում և մի քանի օր շարունակ գեղեցիկ համեմատություններով գովաբանում:

Օրինակ՝

Էն արև, երկնուց արև, տեսե՛ք՝ էն ո՞րն է,
Էն արև, երկնուց արև մեր թագավորն է:
Էն լուսին ամպերի մեջ, տեսե՛ք՝ էն ո՞րն է,
Էն լուսին ամպերի մեջ մեր թագուհին է:

Սովորեք

Սովորեք «Թագվորի՛ մեր, դո՛ւս արի» հայկական ժողովրդական երգը: Այն բնույթով կատակերգ է: Երգեք և պարեք:

ԹԱԳՎՈՐԻ՛ ՄԵՐ, ԴՈ՛ՒՍ ԱՐԻ

Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
Տե՛ս՝ քե ինչե՛ր ենք բերե,
Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
Քե մենք հարսիկ ենք բերե:

Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
Տե՛ս՝ քե ինչե՛ր ենք բերե,
Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
Քե հաց թխող ենք բերե:

Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
Տե՛ս՝ քե ինչե՛ր ենք բերե,
Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
Քե ջուր բերող ենք բերե:

Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
Տե՛ս՝ քե ինչե՛ր ենք բերե,
Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
Քե տուն ավլող ենք բերե:

Սարգիս Պիծակ.
Ծնունդ, 1336 թ.

Սուրբ Ծնունդը Հիսուս Քրիստոսի ծննդյան տոնն է, որին նախորդում է մեկ շաբաթ տևող փոքր պահքը: Սուրբ Ծնունդի օրը մարդիկ միմյանց ողջունում են ու ասում. «**Քրիստոս ծնավ և հայտնեցավ, մեզ և ձեզ մեծ ավետիս**»: Ի պատասխան ասում են. «**Օրհնյալ է հայտնությունը Քրիստոսի**»:

Սուրբ ծննդյան օրը ծիսական ուտելիքներ են պատրաստում, իրար հյուրասիրում և ճաշակում: Հնում հայկական գյուղերում սովորություն կար. Սուրբ Ծնունդի օրը՝ հունվարի 6–ին, երեխաները խումբ–խումբ գնում էին տները, երդիկից պարանով նախշազարդ մի գուլպա կամ կողով կախում և «Ավետիս» երգում: Տանտիրուհին նվերներ և համեղ ուտելիք էր լցնում դրանց մեջ: Երեխաները պարանը վեր էին քաշում, նվերները վերցնում և ուրախ–ուրախ գնում հաջորդ տունը:

Սովորեք

Սովորեք «Ավետիս» երգը: Այն ավետում է Քրիստոսի Ծնունդը և բարեմաղթություններ անում:

ԱՎԵՏԻՍ

Հայկական ժողովրդական



Ամեն տարի հասնինք բարով, ավետիս[1],
Երկար կյանքով, առողջ անձով, ավետիս,
Մի՛ կենաք հետ մարդու խռով, ավետիս,
Եվ մի՛ նայիք խիստ խոժոռով[2], ավետիս:
Ողորմությո՛ւն արեք սիրով, ավետիս,
Եվ խոսեցե՛ք անուշ լեզվով, ավետիս,
Որ մենք զձեզ օրհնենք սիրով, ավետիս,
Որ դուք մնաք երկար ամով[3], ավետիս,
Ձեր հեռավորք գային շուտով, ավետիս,
Եվ ձեր ոչխարը՝ հոտերով, ավետիս,
Կարասը ձեր լցվի գինով, ավետիս,
Եվ տունը ձեր՝ շեն[4] բարիքով, ավետիս:

1. Ավետիս — բարի լուր
2. Խոժոռ — մռայլ, խիստ
3. Ամ — տարի
4. Շեն — հարուստ, բարեկեցիկ

ՋԱ՛Ն, ԼԵ՛, ԼԵ՛

Ժողովրդական երգ

Հանդարտ



Իմ ախպոր ձին փախել է,
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛,
Սասնա սարեր ելել է,
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛:

Սասնա սարեր ելել է,
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛,
Ծիլ–ծիլ խոտեր կերել է,
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛:

Ծիլ–ծիլ խոտեր կերել է,
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛,
Աղբյուրի ջուր խմել է,
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛:



Բարեկենդանը գարնանամուտի տոն է՝ կապված բնության զարթոնքի հետ: Հնում մարդիկ մի ամբողջ շաբաթ երգել են ու պարել, հատուկ խաղեր կազմակերպել, թատերականացված արարողություններ ներկայացրել: Ժամանակին Բարեկենդանը գարնանային Ամանորի (Նոր տարվա) տոն է եղել:

ԻԼԻԼԻ՛–ԴԻԼԻԼԻ՛

Հայկական ժողովրդական

Չափավոր, զվարթ

1.



Հինգ էծ ունեմ իր ուլերով,
Իլիլի՛, դիլիլի՛,
Կաթ կկթեմ պղինձներով,
Իլիլի՛, դիլիլի՛:

Սեր կչափեմ կալի չափով,
Իլիլի՛, դիլիլի՛,
Եղ կհանեմ լվի տակով,
Իլիլի՛, դիլիլի՛:

Նկատեք, որ «Իլիլի՛, դիլիլի՛» երգի մեղեդին սկսվում և ավարտվում է **մի** տոնիկայով:

Պահպանելով «Իլիլի՛, դիլիլի՛» երգի ռիթմի և հնչյունների շարժման ուղղությունը՝ ստեղծենք նոր մեղեդի, որը սկսվի և ավարտվի **դո** տոնիկայով:

2.



Իսկ հիմա «Իլիլի՛, դիլիլի՛» ամբողջական երգը կատարենք կանոնի ձևով:



ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Հայկական ժողովրդական



Հանի՜կ նար, ջանի՜կ նար,
Հանիկ նանարի՜կ նանար:

Հանի՜կ նար, ջանի՜կ նար,
Հանիկ նանարի՜կ նանար:

Կեմիկ չեղավ՝ կապեցի,
Ծամիկ կեմիկ արեցի,
Սելիկ չեղավ՝ կրեցի,
Մեջքիկ սելիկ արեցի:

Քշեցի, հա՛ քշեցի,
Սարի փեշով անցուցի,
Քշեցի, հա՛ քշեցի,
Բերի մեր դուռ թափեցի:

Համբարձման տոնին գյուղի աղջիկները դաշտ են գնում, ծաղկեփնջեր կազմում ու բաժանում մարդկանց: Համբարձման օրը ժողովուրդը գնում է բնության գիրկը, ուրախանում, պարում ու երգում:

ԽՆԿԻ ԾԱՌ

Հայկական ժողովրդական

Մեր դռանը՝ խնկի ծառ,
Գյուլո՛ւմ ջան,
Ձեր դռանը՝ խնկի ծառ,
Գյուլո՛ւմ ջան,
Խնկենին ա բերել բար,
Գյուլո՛ւմ ջան,
Իմ խորոտիկ պստիկ յար,
Գյուլո՛ւմ ջան:

Մեր դռանը՝ խնկի ծառ,
Գյուլո՛ւմ ջան,
Ոսկի բլբուլ վրեն թառ,
Գյուլո՛ւմ ջան,
Կարմիր խնձոր անել տար,
Գյուլո՛ւմ ջան,
Ալվան ծաղիկ տանել տար,
Գյուլո՛ւմ ջան:

Ունկնդրեք

Ունկնդրեք, ապա սովորեք «Զատիկ» ժողովրդական երգը:

ԶԱՏԻԿ

Տարվա մեջ ուրախալի
Դու մի հատ ես, ա՛յ Զատիկ,
Քեզ պես անուշ, քաղցր օր
Չկա, չկա ոչ մի օր:

Զատի՛կ, դու բարո՛վ եկար,
Ծաղկած գարունքով եկար:

Մարդկանց բերկրանք ես բերում,
Ուրախ լուր ես ավետում,
Ամբողջ տարին անհամբեր
Քեզ կարոտով ենք սպասում:

Զատի՛կ, դու բարո՛վ եկար,
Ծաղկած գարունքով եկար:

Զատիկը Հիսուս Քրիստոսի հարության տոնն է, որը հաջորդում է յոթ շաբաթ տևող Մեծ պահքին: Զատկի տոնին մարդիկ միմյանց ողջունում են Քրիստոսի հարություն առնելու առթիվ՝ ասելով. ***«Քրիստոս հարյավ ի մեռելոց»:*** Եվ որպես պատասխան՝ լսում են. ***«Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:*** Զատկի տոնին ծիսական ուտելիքներ են պատրաստում, ցորեն են ծլեցնում սկուտեղների մեջ, վրան կարմիր ներկած ձվեր են շարում, իրար հյուրասիրում են և ճաշակում: Երեխաները ձվախաղեր են խաղում՝ ձու կռվեցնում, ձու գլորում:

Վարդավառի տոնը կատարվում է տարվա ամենաշոգ ամսին՝ հուլիսի կեսերին: Շատ հին ժամանակներում այդ տոնը նվիրված է եղել ջրերի աստվածուհուն: Այդ օրը ընդունված է եղել իրար վրա ջուր ցողել՝ ի սեր աստվածուհու, որպեսզի նա առատ բերք ուղարկի և ապահովի տարվա լիությունն ու բարօրությունը: Մեր օրերում էլ հուլիսին նշում են Վարդավառի տոնը. երեխաները, երիտասարդ աղջիկներն ու տղաները ուրախ իրարանցումով ջուր են լցնում իրար վրա՝ հին ավանդական սովորության համաձայն:

ՍՈՆԱ՛ ՅԱՐ

Ժողովրդական երգ

Խումբ **Սոնա՛ յար, Սոնա՛ յար,**
Սոնա՛ սիրուն, Սոնա՛ յար:
Տղա **Վարդավառը գալիս ա,**
Խումբ **Սոնա՛ յար, Սոնա՛ յար,**
Տղա **Ծաղիկը ցնծալիս ա,**
Խումբ **Սոնա՛ սիրուն, Սոնա՛ յար,**
Տղա **Ա՛յ գյուլում կանչող աղջիկ,**
Խումբ **Սոնա՛ յար, Սոնա՛ յար,**
Տղա **Ձենդ ծլվլալիս ա,**
Խումբ **Սոնա՛ սիրուն, Սոնա՛ յար:**

Խումբ **Սոնա՛ յար, Սոնա՛ յար,**
Սոնա՛ սիրուն, Սոնա՛ յար:
Աղջիկ **Կանաչ տեղը՝ բաղում եմ,**
Խումբ **Սոնա՛ յար, Սոնա՛ յար,**
Աղջիկ **Պարի միջին խաղում եմ,**
Խումբ **Սոնա՛ յար, Սոնա՛ յար,**
Աղջիկ **Կաքավի պես սորալով,**
Խումբ **Սոնա՛ յար, Սոնա՛ յար,**
Աղջիկ **Տղաներին դաղում եմ,**
Խումբ **Սոնա՛ սիրուն, Սոնա՛ յար:**

Հարցեր և առաջադրանքներ

- Ինչ ծիսական երգեր գիտեք. կատարեք:
- Ստեղծեք ռիթմական նվագակցություն և նվագակցեք «Թագվորի՛ մեր, դո՛ւս արի» երգին:
- Կատարման ինչ արտահայտչամիջոցներով կարելի է արտահայտել «Համբարձման երկուշաբթի» երգի տրամադրությունը:

ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Հնուց ի վեր հայ ժողովրդի մի մասը պատմական դեպքերի բերումով ստիպված է եղել թողնել իր բնակավայրերը և բնակություն հաստատել աշխարհի տարբեր երկրներում: Նաև տնտեսական պայմաններն են շատերին ստիպել հեռանալ տարբեր երկրներ՝ աշխատանք փնտրելու, և պանդուխտ դարձրել նրանց: Դա է պատճառը, որ **պանդխտության** երգերը հայ ժողովրդի երգարվեստում բավականին մեծ տեղ են գրավում: Այդ երգերն արտահայտում են հայրենիքից հեռու ապրող մարդկանց կարոտը, հույզերն ու ապրումները:

Ունկնդրեք

Ունկնդրեք Կոմիտասի մշակմամբ «Կռունկ» հայկական ժողովրդական երգը: Ունկնդրեք մեներգչի, այնուհետև՝ ջութակի կատարմամբ: Պատմեք ձեր տպավորությունները:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Հայ ժողովրդի կյանքի պատմական դեպքերի ու իրադարձությունների արտացոլումը **հայրենասիրական** երգերն են, որոնց հիմնական բովանդակությունը հայ ժողովրդի, նրա հերոս զավակների պայքարն է հայրենիքի ազատության ու անկախության համար:

Ազատասիրական ոգով է ստեղծված «Տալվորիկցի կտրիճ» ազգային հայրենասիրական երգը, որը ծնունդ է առել Սասունի հայության ինքնապաշտպանական կռիվներում: Երգը տարածվել է և հասել մինչև մեր օրերը՝ դառնալով մեր երկրի դժվար անցյալի տարեգրության մի էջ:

Ժողովուրդը սիրել և երգերով փառաբանել է իր պաշտպան հերոսներին: Առանձնապես սիրված էր Անդրանիկ զորավարը: Նա հայ ազգային–ազատագրական պայքարի հերոսներից է: Անդրանիկի մասին հյուսված երգերից է «Կովկասի քաջերը»:

Սովորեք

Սովորեք «Կովկասի քաջեր» երգը: Փորձեք ձեր կատարմամբ արտահայտել երգի տրամադրությունը:

ԿՈՎԿԱՍԻ ՔԱՋԵՐ

Անդրանիկ զորավարի հուշարձանը Երևանում
Հեղինակ՝ Արա Շիրազ

Կովկասի՛ քաջեր, խմբե՛ր կազմեցեք,
Քաջ Անդրանիկին օգնությա՛ն հասեք,
Առած իր շուրջը զինվորներ ութսուն՝
Մաքրե ճանապարհ նա դեպի Սասուն:

Սուլթան, սարսափած, ճարը կտրված,
Հազար ոսկի է գլխին խոստացած:
Հա՛յ պատանիներ, շուտո՛վ շարժվեցեք,
Երբեք մի՛ վախնաք, սուրե՛ր շարժեցեք:

Հասել է ժամը սուրբ ազատության,
Կենալու ժամ չէ, շուտո՛վ քայլեցեք,
Սիրենք միություն, չանենք վատություն,
Ունենանք, հայե՛ր, սուրբ ազատություն:

Հարցեր և առաջադրանքներ

- Հայրենասիրական ինչ երգեր գիտեք:
- Ազգային–ազատագրական պայքարի ո՞ր հերոսներին գիտեք:
- Պատմեք Անդրանիկ զորավարի մասին:
- Երաժշտության ո՞ր տեսակին են պատկանում հայրենասիրական երգերը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

«Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը. գնացեք և սովորեցեք նրանից»: Մեծ Կոմիտասի այս խոսքերը պատգամ են դարձել հայ կոմպոզիտորների համար: Նրանք ոչ միայն մշակել, բազմաձայնել են հայկական ժողովրդական երգը երգչախմբի, նվագարանների և նվագախմբի համար, այլև օգտագործել են իրենց ստեղծագործություններում, երգերին տվել նոր շունչ, նոր երանգ՝ ստեղծելով գեղարվեստական նոր կերպարներ: Այս իմաստով մեծ է հայ կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, Արամ Խաչատրյանի, Գրիգոր Եղիազարյանի և մյուսների ավանդը:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Քելե՛, քելե՛» հայկական ժողովրդական երգը և ձայնակցեք: Ուշադրությունն դարձրեք երգի մեղեդու հնչերանգներին, մեղեդային դարձվածքներին և ռիթմական պատկերներին:

ՔԵԼԵ՛, ՔԵԼԵ՛

Քելե՛, քելե՛, քելքիդ մեռնեմ,
Քո գովական խելքիդ մեռնեմ:

Կրկներգ ***Սիրավո՛ր լորիկ,***
Վիրավո՛ր լորիկ,
Լորի՛կ,
Սևավո՛ր լորիկ,
Լորի՛կ ջան:

Քելե՛, քելե՛, սոյիդ մեռնեմ,
Քո չինարի բոյիդ մեռնեմ:

Կրկներգ ***Սիրավո՛ր լորիկ...***

Քելե՛, քելե՛, բերնիդ մեռնեմ,
Քո սիրունիկ ձենիդ մեռնեմ:

Կրկներգ ***Սիրավո՛ր լորիկ...***

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(1903–1978)

Մարտիրոս Սարյան.
«Արամ Խաչատրյան»

Արամ Խաչատրյանը ծնվել է Թիֆլիս քաղաքում: Իր առաջին երաժշտական դաստիարակությունը նա ստացել է ընտանիքում, որտեղ միշտ հնչում էր հայկական ժողովրդական երգը:

«Մայրս ու հայրս,— ասել է Արամ Խաչատրյանը,— իմ մեջ մեծ սեր են առաջացրել ժողովրդական երաժշտության հանդեպ: Մորս շուրթերից ես լսել եմ բազմաթիվ ժողովրդական երգեր: Երբեք չեմ մոռանա, երբ նա կար անելիս միշտ երգում էր «Որսկան ախպեր» տխուր երգը: Շատ տարիներ անց այդ երգը ես օգտագործել եմ իմ Երկրորդ սիմֆոնիայի դանդաղ մասում»:

Արամ Խաչատրյանը ոսկե մեդալով ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան: Նա համաժողովրդական ճանաչում ստացած բազմաթիվ հիանալի ստեղծագործությունների հեղինակ է: Դրանցից են «Գայանե» և «Սպարտակ» բալետները, ջութակի, դաշնամուրի և թավջութակի կոնցերտները, առաջին և երկրորդ սիմֆոնիաները և այլն:

Մեծ կոմպոզիտորը չի մոռացել նաև մանուկներին, որոնց համար ստեղծել է «Մանկական ալբոմ» դաշնամուրային մանրանվագների ժողովածուն, երգեր և այլն:

Արամ Խաչատրյանի աճյունը հանգչում է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Ունկնդրեք

Ունկնդրեք Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտից մի հատված և ասացեք, թե ձեզ ծանոթ որ երգի հնչերանգներն են հնչում:

Կոնցերտը դասական կոմպոզիտորների արվեստում ձևավորված բազմամաս ստեղծագործություն է՝ գրված մենակատարի և նվագախմբի համար: Իտալերեն **concerto** նշանակում է համատեղ, համաձայնեցված: Ջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված կոնցերտը բաղկացած է երեք մասից և սկսվում է նախանվագով, որը կատարում է սիմֆոնիկ նվագախումբը: Այնուհետև հնչում է ջութակի մենանվագը: Առաջին մասում լսում ենք հայկական ժողովրդական երգերի ծանոթ մեղեդային դարձվածքներ, մոտիվներ, որոնք հիշեցնում են «Քելե՛, քելե՛» ժողովրդական երգը:

Արամ Խաչատրյանը ստեղծել է երաժշտական նոր կերպար, որը իր ազգային հնչողությամբ և գունեղությամբ հուզում է բոլորին:

Անգնահատելի է հայ մեծանուն կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ Արամ Խաչատրյանի դերը հայ ազգային դասական երաժշտության զարգացման գործում: Ժողովրդական երաժշտությունը դարձնելով իր ստեղծագործությունների ակունքը՝ նա իր փայլուն տաղանդի շնորհիվ հայ երաժշտությունը հասցրեց այնպիսի գեղարվեստական կատարելության, որը համաշխարհային լայն ճանաչում բերեց թե՛ կոմպոզիտորին և թե՛ հայ երաժշտությանը:

Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը Ժան Տեր–Մերկերյանի կատարմամբ

Սովորեք

Սովորեք «Փափուռի» հայկական ժողովրդական երգը: Ուշադրություն դարձրեք ռիթմական պատկերներին:

ՓԱՓՈՒՌԻ

Ժողովրդական երգ



Սարեն կգա ճիավոր,
Փափուռի՛, մի՛ լա, մի՛ լա,
Արծվի նման թևավոր,
Փափուռի՛, շապիկ, շիլա:

Սարեն կգա թուխ աղջիկ,
Փափուռի՛, մի՛ լա, մի՛ լա,
Արևի շողն երեսին,
Փափուռի՛, շապիկ, շիլա:

Կատարեք *«Փափուռին» պարերգ է:*

Պարեք *Երգեք և պարեք:*

«Փափուռի» երգի մեղեդու մեջ կան ձեզ անծանոթ տևողության հնչյուններ, որոնք երկու անգամ կարճ են և կատարվում են երկու անգամ արագ, քան ութերորդական տևողության հնչյունները: Այդ կարճ տևողության հնչյունները կոչվում են **տասնվեցերորդական**:

Դրանք նոտագրվում են այսպես՝ կամ

Մեկ ութերորդական տևողության նոտան իր մեջ պարունակում է երկու տասնվեցերորդական տևողության նոտա.



Դուք արդեն գիտեք, որ քառորդ և ութերորդական տևողության նոտաներն ունեն **թա, թի** վանկային անունները: Տասնվեցերորդական տևողության հնչյունը նույնպես ունի վանկային անուն: Այն նշանակվում է **թե** վանկով.

Կատարեք *«Փափուռի» երգի մեղեդու ռիթմը կատարեք ռիթմի վանկային անուններով և բախեք:*

Թի–թե–թե ռիթմական պատկերը ներկայացնում է տակտի մեկ մասը. այն պետք է կատարել մեկ բախման ընթացքում: **Թի–թե–թե** ռիթմական պատկերը վերարտադրելիս **թի** տևողության հնչյունը կատարվում է համեմատաբար երկարաձիգ, իսկ **թե–թե** տևողությունները՝ արագ, կարճ:



Կատարեք *«Փափուռի» երգը կատարեք ռիթմական նվագակցությամբ:*



Հարցեր և առաջադրանքներ

- Ժողովրդական երգերի ինչ մշակումներ գիտեք:
- Ո՞ր ժողովրդական երգն է օգտագործված Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտում:
- Ինչ գիտեք կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի մասին:
- Երաժշտական հնչյունների ինչ տևողությունների եք ծանոթ:

ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
(1908–1988)

Անվանի կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանը ծնվել է Իգդիր քաղաքի մոտակայքում՝ Բլուր գյուղում: Մանկուց սիրել է ժողովրդական երգն ու երաժշտությունը: Ինքնուրույն սովորել է շվի նվագել:

Իգդիրի մոտակայքի ռուսական բանակի զորագունդը ուներ փողային նվագախումբ, որի երաժշտական կատարումները տղային շատ էին հմայում: Նվագախմբի դիրիժորը, տեսնելով տղայի երաժշտական ընդունակությունները, նրան մեծ ապագա է կանխատեսում: Այդ դիրիժորն էլ դառնում է նրա երաժշտության առաջին ուսուցիչը: Գրիգոր Եղիազարյանը հետագայում ավարտում է Մոսկվայի կոնսերվատորիան: Հայտնի են նրա «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը, «Արևածագին» սիմֆոնիկ պատկերը, «Հրազդան» սիմֆոնիան, «Սևան» ու «Արա Գեղեցիկ և Շամիրամ» բալետները:

Սովորեք

Սովորեք «Նուբար» ժողովրդական երգը:

ՆՈՒԲԱՐ

Նուբարի բոյը չինար է,
Աչքերը նուշ ու խումար է,
Երեք օրվա լուսնի նման
Ունքերը կեռ ու կամար է:

Կրկներգ

Նուբարի բոյը չինար է,
Աչքերը նուշ ու խումար է,
Երեք օրվա լուսնի նման
Ունքերը կեռ ու կամար է:

Արև ցոլաց սարին, քարին,
Նուբար կերթա հանդը վերին,
Ով որ տեսնի իմ Նուբարին,
Չի մոռանա ամբողջ տարին:

Կրկներգ

Նուբարի բոյը չինար է,
Աչքերը նուշ ու խումար է,
Երեք օրվա լուսնի նման
Ունքերը կեռ ու կամար է:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատված Գրիգոր Եղիազարյանի «Սևան» բալետից: Ինչ փոփոխության է ենթարկվել «Նուբար» երգը «Սևան» բալետում:

Կատարեք

Երգեք նոտաներով:

ՕՐՈՐ

Ժողովրդական երգ



Խոտը քեզ լինի ներքնակ,
Մանրիկ թուփը՝ բարձ,
Լայն տերևը՝ քեզ վերմակ,
Դե՛, քնի՛ր, մի՛ լաց:

Թող քամին գա օրորի,
Իմ սիրո՛ւն լորիկ,
Ծիտը երազներ բերի,
Իմ անո՛ւշ բալիկ:

Եթե «Օրոր» երգի մեղեդու հնչյունները հերթականությամբ դասավորենք հնգագծի վրա ամենացածր ձայնաստիճանից՝ **լա** տոնիկայից մինչև ամենաբարձր ձայնաստիճանը, ապա կստանանք այդ երգի *հնչյունաշարը.*



Սանդղակի վրա այս հնչյունաշարը կունենա հետևյալ տեսքը.

Կատարեք *Լա տոնիկայով հնչյունաշարը փորձեք երգել ձեռքի նշաններով: Երգելիս աշխատեք ոչ միայն ճիշտ ցուցադրել ձեռքի նշանները, այլև ճիշտ երգել սանդղակի ձայնաստիճանների բարձրությունները (մեկ և կես ձայնաստիճանները):*

Լա տոնիկայով հնչյունաշարը կարելի է նվագել նաև դաշնամուրի ստեղնաշարով.



Լա տոնիկայով հնչյունաշարը երգեք նոտաներով՝ երկձայն.





Հարցեր և առաջադրանքներ

- Ինչ գիտեք կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի մասին:
- Լա տոնիկայով ստեղծեք մեղեդի, ցույց տվեք ձեռքի նշաններով և երգեք:
- Տոնիկան հնչյունաշարի ո՞ր ձայնաստիճանն է:
- Ինչպե՞ս են գրվում և կարդացվում մեկ տասնվեցերորդական տևողության նոտաները:

ԱՇՈՏ ՍԱԹՅԱՆ
(1906–1958)

Նշանավոր կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը շատ է սիրել հայրենի բնությունը և ժողովրդական ավանդույթները: Օժտված լինելով երաժշտական բացառիկ ձիրքով՝ նա ստեղծել է հայի հոգուն հարազատ մեղեդիներ: Դրանցից են «Զանգեզուրի լեռներում» սիմֆոնիկ պատկերը, «Արարատյան դաշտի երգեր» շարքը՝ գրված մեներգիչների, երգչախմբի և նվագախմբի համար: Սաթյանի երգերը զգացմունքային են և հուզական: Դրանք միանգամից դառնում են հոգեհարազատ և անջնջելի հետք են թողնում մեր հիշողության մեջ: Այդպիսի երգերից են «Մարտիկի երգը», որը նա գրել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին, իսկ Եղիշե Չարենցի բանաստեղծության խոսքերով գրված «Ես իմ անուշ Հայաստանի» երգը բոլոր հայերի համար ամենահարազատ երգերից է:

Ունկնդրեք

Ունկնդրեք Աշոտ Սաթյանի «Արարատյան դաշտի երգեր» շարքից «Խաղողաքաղը», ապա «Մարտիկի երգը» և «Ես իմ անուշ Հայաստանի» երգերը:

Կատարեք

Ունկնդրեք և ձայնակցեք Աշոտ Սաթյանի «Աշխատանքի երգը»:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԸ

Փա՛ռք տանք մեր ջրին ու հողին,
Մեր հողում կյանքն ստեղծողին,
Փա՛ռք տանք ցանողին, փա՛ռք տանք հնձողին,
Փա՛ռք տանք աշխարհին բարիք բերողին: } 2 անգամ

Աշխատող մարդն է միշտ ստեղծում
Աշխարհում ամեն, ամեն բան,
Աշխատող մարդու ձեռքն ամեն գործում
Պտղատու ծառի ճյուղի է նման: } 2 անգամ

Միևնույն ժողովրդական երգը տարբեր կոմպոզիտորների մշակումներում հնչում է յուրովի:

Օրինակ՝ «Հո՛յ, իմ նազանի յարը» երգը Թաթուլ Ալթունյանը մշակել է ժողովրդական երգի–պարի համույթի համար: Կոմպոզիտոր Գայանե Չեբոտարյանը՝ դաշնամուրի, իսկ ֆրանսիացի հայազգի կոմպոզիտոր Ժորժ Կառվարենցը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Հո՛յ, իմ նազանի յարը» հայկական ժողովրդական երգի մշակումները, համեմատեք միմյանց հետ և պատմեք ձեր տպավորությունները:

ՀՈ՛Յ, ԻՄ ՆԱԶԱՆԻ ՅԱՐԸ

Ես աղջիկ եմ, նազ ունիմ,
Հո՛յ, իմ նազանի յարը,
Հագիս շորը խաս ունիմ,
Ջա՛ն, իմ նազանի յարը:

Նազան իմ յարը,
Հո՛յ, նազան յարը:
} *2 անգամ*

Շորերդ ծալ–ծալ աղջիկ,
Հո՛յ, նազանի յարը,
Այտերիդ սև խալ աղջիկ,
Ջա՛ն, նազան իմ յարը:

Բոյդ՝ չինարի ծառ,
Հո՛յ, նազան յարը,
Ընկել եմ սարեսար,
Ջա՛ն, նազան յարը:
} *2 անգամ*

Հայ կոմպոզիտորները գրել են նաև այնպիսի ստեղծագործություններ, որոնք ոգով նման են ժողովրդական երաժշտությանը, բայց դրանք ինքնուրույն ստեղծագործություններ են:

Ունկնդրեք

Ունկնդրեք կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանի «Ժողովրդականին նմանեցնելով», Սարգիս Բարխուդարյանի «Նազ պար» դաշնամուրային մանրանվագները և Ռոբերտ Պետրոսյանի «Պոլիֆոնիկ» կատակերգը: Համեմատեք դրանք ժողովրդական երգերի ու պարերի հետ:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Հայկական ժողովրդական երգերի կարևոր մաս են կազմում մանկական երգերը: Մանկական երգերի մի մասը մանուկների համար ստեղծում են մեծերը, իսկ մյուս մասը՝ իրենք՝ երեխաները: Դրանցից են օրորները, երեխային խաղացնելու երգերը, երգ–հանելուկները, երգ–առակները և այլն: Սակայն երեխաները հաճույքով օգտվում են նաև մեծերի երգացանկից: Սիրված երգեր են, օրինակ՝ «Նուբար», «Շողեր ջան», «Լեպո՛, լե՛, լե՛», «Հոպա՛ զարկե ու քելե՛», «Ջա՛ն, ծաղիկ» և այլ երգեր:

Կատարեք

Փորձե՛ք երգել նոտաներով, ապա՝ բառերով, երկձայն:

ՍԱ՛Ր, ՍԱ՛Ր

Ժողովրդական երգ



Սա՛ր, սա՛ր,
Հով սարերի հովիկն եմ,
Ջա՛ն, ջա՛ն,
Պաղ ջրերի ցողիկն եմ:

Սա՛ր, սա՛ր,
Սարերի փունջ ծաղիկն եմ,
Ջա՛ն, ջա՛ն,
Արմենակի քույրիկն եմ:

Սովորեք

Սովորեք «Արև, արև, արի՛ դուս» խաղերգը: Առաջին մասի տեմպը չափավոր է, իսկ երկրորդ մասինը՝ աշխույժ: Կատարեք նաև տեմպին համապատասխան շարժումներ:

ԱՐԵՎ, ԱՐԵՎ, ԱՐԻ՛ ԴՈՒՍ

Ժողովրդական խաղերգ



Արև՛, արև՛, արի՛ դուս,
Քո հերն ու մերն եկել են,
Ոսկի դանակ բերել են,
Մեծ քարի տակ հորել են:

Համոն եկել տեսել է,
Մեկ ուրիշ տեղ պահել է,
Մեր քուչին էլ գտել է,
Ոսկե դանակ հանել է:

Արև՛, արև՛, արի՛ դուս,
Քեզ բերել ենք աչքալուս,
Քո քույրիկը՝ լուսնկան,
Բերեց չամիչ մեկ ման:

Վա՜յ, արևին խաբեցինք,
Ջա՜ն, արևին խաբեցինք,
Ջա՜ն, արևին խաբեցինք,
Ամպի տակից հանեցինք:

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ
(1883–1935)

Ականավոր կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը հայ դասական երաժշտության հիմնադիրներից է: Նրա ստեղծագործության մեջ հայկական ռոմանսը հասավ կատարելության:

Նրա հայրը շատ էր սիրում երգ ու նվագ և հաճախ էր երգում հայկական ժողովրդական երգեր: Այդ մեծ սերը փոխանցվեց նաև որդուն:

Ռոմանոսը փոքր հասակից սովորել է նվագել մանդոլինա, բայց միշտ երազել է դաշնամուրի մասին: Աշակերտական տարիներին նա հավաքում էր ընկերներին, սովորեցնում իր իմացած երգերը և համերգներ կազմակերպում դպրոցում: Այդ կազմակերպչական ընդունակությունը ցայտուն կերպով արտահայտվեց նաև հետագայում, երբ նա դարձավ ոչ միայն հայտնի կոմպոզիտոր, այլև խմբավար, մանկավարժ, երաժշտական–հասարակական գործիչ: Նրա մասնակցությամբ ստեղծվեց Երևանի կոնսերվատորիան, օպերայի և բալետի թատրոնը: Նա հեղինակել է «Աշնան տողեր», «Զմրուխտի» և «Զառվառ» սքանչելի ռոմանսաշարերը, երգեր է գրել նաև մանուկների համար, կատարել ժողովրդական երգերի մշակումներ:

Ունկնդրեք

Ունկնդրեք, ապա սովորեք Ռոմանոս Մելիքյանի «Ծիտիկի սերը» երգը: Կոմպոզիտորը ձգտել է երգի մեղեդու հնչերանգները մոտեցնելու ժողովրդականին:

ԾԻՏԻԿԻ ՍԵՐԸ

Խոսք՝ Հ. Աղաբաբի

Ես սիրում եմ կարմիր արև, արև,
Ես սիրում եմ կանաչ տերև, տերև,
Ա՛յ արևիկ, ծի՛վ–ծի՛վ,
Ա՛յ տերևիկ, տի՛վ–տի՛վ:

Ինձ տվել եք երկու թևիկ, թևիկ,
Ինձ տվել եք փոքրիկ սրտիկ, սրտիկ,
Երկու թևիկ, ծի՛վ–ծի՛վ,
Փոքրիկ սրտիկ, տի՛վ–տի՛վ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

Ժողովուրդը դարեր շարունակ իր հոգուն հարազատ երգերը և պարերը կատարել է նաև իր ստեղծած նվագարաններով: Այդ նվագարաններից են *շվին, սրինգը, բլուլը, դուդուկը, զուռնան, պարկապզուկը, սազը, քամանին, քամանչան, թառը, քանոնը, սանթուրը, դափը, դհոլը և այլն:*

Ունկնդրեք

Ունկնդրեք երգեր և պարեր ժողովրդական նվագարանների կատարմամբ:

շվի

սրինգ

զուռնա

դուդուկ

բլուլ

պարկապզուկ

քամանի

քամանչա

սազ

թառ

սանթուր

քանոն

դհոլ

դափ

Կոմիտասը, հայկական ժողովրդական երգի գիտակ և լավ կատարող լինելուց բացի, նվագել է նաև շնչական (փողային) նվագարաններով: Նրա սիրելի նվագարաններն են եղել սրինգն ու բլուլը:

Հայաստանի հնագույն նվագարանների «Տկզար» նվագախումբը

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ մանկական երգեր գիտեք. երգե՛ք:
- Ռոմանոս Մելիքյանի ո՞ր երգերին եք ծանոթ:
- Թվարկե՛ք ձեզ ծանոթ ժողովրդական նվագարանների անունները:

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
(1921–1983)

Ականավոր կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը հայ երաժշտության ամենափայլուն դեմքերից է: Նա ճանաչված է նաև Հայաստանի սահմաններից դուրս: Բաբաջանյանը նաև լավ դաշնակահար էր: Նա առաջինն էր Հայաստանում, որ դեռ պատանեկան հասակում ելույթ ունեցավ սիմֆոնիկ նվագախմբի հետ և կատարեց Բեթհովենի դաշնամուրային առաջին կոնցերտը: Դա մեծ իրադարձություն էր, որն առիթ դարձավ երիտասարդի վրա հրավիրելու մասնագետների ուշադրությունը: Հետագայում նա ավարտեց Մոսկվայի կոնսերվատորիան:

Բաբաջանյանը բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է: Հայտնի են նրա «Հերոսական բալլադը» դաշնամուրի և նվագախմբի համար, դաշնամուրային տրիոն, լարային քառյակները, դաշնամուրային ստեղծագործությունները: Սակայն նա մեծ համբավ էր վայելում նաև որպես սքանչելի երգերի հեղինակ:

Սովորեք

Սովորեք Առնո Բաբաջանյանի «Մեր սիրելի Երևան» երգը, որի խոսքերը գրել է բանաստեղծ Արամայիս Սահակյանը:

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԵՐԵՎԱՆ

Դու ունես անցյալ, քաղա՛ք իմ, դարավոր անցյալ,
Դու եղար հայոց ամրոց–բերդ, մայր քաղաք դարձար:
Պատմության դաժան հողմի մեջ շատ ցավեր տեսար,
Բայց շողաց կյանքիդ մի նոր էջ, այս փառքին հասար:

Կրկներգ

Դու մեզ համար նորաշունչ Անի ու Վան,
Հույս ու հավատ հայության,
Քո սրբությամբ դու ամեն հայի մեջ կաս,
Մեր սիրելի՛ Երևան:
Լա՛, լա՛, լա՛, լա՛ . . . . . .
Լա՛, լա՛, լա՛, լա՛ . . . . . .
Քո սրբությամբ դու ամեն հայի մեջ կաս,
Մեր սիրելի՛ Երևան:

Դու ունես ներկա, քաղա՛ք իմ, լուսավոր ներկա,
Մեր հայոց պայծառ մտքի ծով և փառքդ վկա:
Վեհապանծ ես և գեղեցիկ, հրաշքներով լի,
Որ Մասիսն անգամ ասես քո շենքերից լինի:

Կրկներգ *Դու մեզ համար նորաշունչ Անի ու Վան...*

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք Առնո Բաբաջանյանի «Հերոսական բալլադից» մի հատված հեղինակի կատարմամբ: Այնուհետև ունկնդրե՛ք և ձայնակցե՛ք «Ճախարակ» երգը, որի խոսքերը, մեղեդին հորինել է անվանի գրող Ղազարոս Աղայանը: Առնո Բաբաջանյանը այդ երգի ազդեցությամբ ստեղծել է «Ազգ փառապանծ» երգը: Լսե՛ք և պատմե՛ք ձեր տպավորությունները:

ՃԱԽԱՐԱԿ

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարա՛կ,
Մանի՛ր սպիտակ մալանչներ,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր:

Տիգրանիկս գուլպա չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Գաբրիելս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց:

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարա՛կ,
Մանի՛ր սպիտակ մալանչներ,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1920–2012)

Ականավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը հայ երաժշտության երևելի դեմքերից է: Նրա երաժշտական տաղանդը շատ վաղ է դրսևորվել: Վեց տարեկան էր, երբ նրա համար դաշնամուր գնեցին: Ընտելանալով գործիքին՝ շուտով նա սկսեց լսողությամբ նվագել իր իմացած երգերի և պարերի մեղեդիները: Իսկ մեկ տարի անց՝ կոնսերվատորիայի մանկական խումբ ընդունվելիս, նա Ալեքսանդր Սպենդիարյանի ներկայությամբ համարձակ և անկաշկանդ նվագեց «Ղայթարման», «Էնզելին», նրա «Երևանյան էտյուդներից»՝ արժանանալով հեղինակի դրվատանքին:

Ալեքսանդր Հարությունյանը բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է: Նա գրել է «Հայրենիք» կանտատը, սիմֆոնիա, «Տոնական նախերգանք» սիմֆոնիկ նվագախմբի համար, «Սայաթ–Նովա» օպերան, որտեղ նա օգտագործել է մեծ աշուղի երգերը, «Մեծապատիվ մուրացկաններ» երաժշտական կատակերգությունը: Լինելով նաև լավ դաշնակահար՝ նա իր սիրելի գործիքի համար գրել է «Կոնցերտ» և «Կոնցերտինո», որը սիրով կատարում են դաշնակահարները: Իսկ նրա «Շեփորի կոնցերտը» մեծ հաջողությամբ կատարվում է տարբեր երկրներում՝ համաշխարհային ճանաչում բերելով հեղինակին:

Ունկնդրեք

Ունկնդրեք Ալեքսանդր Հարությունյանի «Հայրենիք» կանտատից մի հատված, որը կոչվում է «Օրորոցային», և մի հատված «Շեփորի կոնցերտից»:

Սովորեք

Սովորեք «Լուսնյակը ցոլաց, գնաց» ժողովրդական երգը: Այն կատարելու ժամանակ ուշադրություն դարձրեք ֆրազների սկզբի դադարներին:

ԼՈՒՍՆՅԱԿԸ ՑՈԼԱՑ, ԳՆԱՑ

Լուսնյակը ցոլաց, գնաց,
Դեմ առավ սարին, մնաց,
Սրտով սիրած անուշ յարս
Ինձ թողեց, հեռու գնաց:

Ա՛յ բաղմանչի, բաղմանչի՛,
Շիվ կա՝ շվի նման չի,
Հարս ու աղջիկ շատ եմ տեսել,
Մեկն իմ յարին նման չի:

Սովորեք

Սովորեք «Լուսնյակը ցոլաց, գնաց» երգի երկրորդ ձայնը: Երգեք երկձայն:

Վարդան Մախոխյան. «Լուսնակ գիշեր»

Ունկնդրեք

Առնո Բաբաջանյանը և Ալեքսանդր Հարությունյանը նաև ընկերներ են եղել և միասին գրել են «Հայկական ռապսոդիա» ստեղծագործությունը: Ունկնդրեք այդ ռապսոդիան, որը հենց իրենք էլ կատարում են երկու դաշնամուրով: Այդ ստեղծագործության մեջ նրանք օգտագործել են մի ժողովրդական երգ, որը ձեզ ծանոթ է: Ուշադիր լսեք և կռահեք, թե դա որ երգն է:

ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ
(1921–2012)

Հայ ականավոր կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի ստեղծագործությունները հնչում են ամբողջ աշխարհում՝ մեծ փառք բերելով հեղինակին և հայ երաժշտությանը: Նա գրել է հիանալի ստեղծագործություններ սիմֆոնիկ նվագախմբի, լարային քառյակի, երգչախմբի, տարբեր նվագարանների համար, երգեր, ռոմանսներ, տպավորիչ կինոերաժշտություն: «Քաոս» կինոֆիլմի համար նրա գրած երաժշտությունից «Շուշանիկ» սքանչելի քնարական հատվածը հաճախ հնչում է նաև համերգային բեմերում և շատ սիրված է ունկնդիրների կողմից:

Է. Միրզոյանը նաև հասարակական գործիչ է և հմուտ մանկավարժ: Երկար տարիներ դասավանդելով Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում՝ նա բազմաթիվ երիտասարդ կոմպոզիտորների է կրթել, որոնք հետագայում դարձել են ճանաչված արվեստագետներ:

Դուք արդեն ունկնդրել եք հատված Էդվարդ Միրզոյանի սիմֆոնիայից և «Ալբոմ թոռնիկի համար» մանկական ժողովածուից «Խաղ» մանրանվագը՝ գրված դաշնամուրի համար: Շարունակեք ծանոթանալ նրա ստեղծագործություններին: Ինչպես մյուս հայ կոմպոզիտորները, Էդվարդ Միրզոյանն իր ստեղծագործություններում նույնպես օգտագործել է հայկական ժողովրդական երգեր:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Չեմ ու չեմ» հայկական ժողովրդական երգը՝ Թաթուլ Ալթունյանի անվան հայկական երգի–պարի պետական համույթի կատարմամբ, այնուհետև սովորեք այն երգել:

ՉԵՄ ՈՒ ՉԵՄ

Խումբ — *Դե էլի՛, դե էլի՛, նազ մի՛ անի,*
Դե էլի՛, էլի՛ խաղա:

Աղջիկ — *Չեմ ու չեմ, չեմ ու չեմ, չեմ, չեմ ու չեմ,*
Չեմ կրնա, կրնա խաղա:

Խումբ — *Նա՛զ աղջիկ, նա՛զ աղջիկ, նազ մի՛ անի,*
Դու կրնաս, կրնաս խաղա:

Աղջիկ — *Չեմ ու չեմ, չեմ ու չեմ, չեմ, չեմ ու չեմ,*
Չեմ կրնա, կրնա խաղա,
Մազերուս, մազերուս ծանրութենեն
Չեմ կրնա, կրնա խաղա:

Խումբ — *Նա՛զ աղջիկ, նա՛զ աղջիկ, նազ մի՛ անի,*
Դու կրնաս, կրնաս խաղա,
Մազերդ, մազերդ քից պատուհան,
Դու կրնաս, կրնաս խաղա:

Աղջիկ — *Չեմ ու չեմ, չեմ ու չեմ, չեմ, չեմ ու չեմ,*
Չեմ կրնա, կրնա խաղա,
Վզնոցիս, վզնոցիս ծանրութենեն
Չեմ կրնա, կրնա խաղա:

Խումբ — *Նա՛զ աղջիկ, նա՛զ աղջիկ, նազ մի՛ անի,*
Դու կրնաս, կրնաս խաղա,
Վզնոցդ, վզնոցդ քից պատուհան,
Դու կրնաս, կրնաս խաղա:

Ունկնդրեք

Ունկնդրեք մի հատված Էդվարդ Միրզոյանի «Պարային սյուիտից»: Սյուիտը մի քանի տարբեր բնույթի պարե-ից բաղկացած բազմամաս ստեղծագործություն է: Լսեք և ասացեք, թե որ ժողովրդական երգն է հնչում Էդվարդ Միրզոյանի «Պարային սյուիտում»:

ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆ
(1920–1998)

Հայ ականավոր կոմպոզիտոր Ղազարոս Սարյանը նշանավոր գերդաստանի զավակ էր: Նա կրում էր իր անվանի պապի՝ Ղազարոս Աղայանի անունը: Իսկ հանճարեղ հորից՝ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանից, նա ժառանգել էր հոգու ազնվություն, իմաստուն միտք և մեծ հայրենասիրություն: Երբ 1941 թ. սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նա գնաց ռազմաճակատ՝ հայրենիքը պաշտպանելու: Կռվեց ոչ միայն զենքով, այլև իր արվեստի ուժով: Կարճատև դադարների ժամանակ նա իր ակորդեոնի նվագով ուրախություն և սփոփանք էր բերում հայրենի տունը կարոտած, հոգնած զինվորներին: Իսկ Մարտիրոս Սարյանն իր խելացի և իմաստուն նամակներով քաջալերում էր զինվոր որդուն, իր լավատեսությամբ և հաղթանակի հավատով ամրապնդում նրա ոգին: Պատերազմից հետո Ղազարոս Սարյանը շարունակեց ընդհատված երաժշտական կրթությունը Մոսկվայի կոնսերվատորիայում՝ Դմիտրի Շոստակովիչի ստեղծագործական դասարանում: Ղազարոս Սարյանը բազմաթիվ արժեքավոր ստեղծագործությունների հեղինակ է: Հանրա-

Մարտիրոս Սարյան. «Հայաստան», պաննո

հայտ են նրա «Սիմֆոնիկ պատկերները», սիմֆոնիան, «Ջութակի կոնցերտը», «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն, կամերային ստեղծագործությունները, երգերը, կինոերաժշտությունը:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատված Ղազարոս Սարյանի «Սիմֆոնիկ պատկերներից» և ասացեք, թե նա ժողովրդական որ պարերգն է օգտագործել իր ստեղծագործության մեջ:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատված Ղազարոս Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյից:

Կոմպոզիտորն այդ ստեղծագործությունը գրել է հոր՝ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի «Հայաստան» պաննոյից տպավորված:

Հարցեր և առաջադրանքներ

- Էդվարդ Միրզոյանի ո՞ր ստեղծագործություններն եք հիշում:
- Ի՞նչ է սյուիտը:
- Առնո Բաբաջանյանի ո՞ր ստեղծագործություններն եք լսել. թվարկեք:
- Ովքե՞ր են «Հայկական ռապսոդիայի» հեղինակները:
- Ժողովրդական ո՞ր երգն է հնչում «Հայկական ռապսոդիայում»:
- Ո՞վ է «Սիմֆոնիկ պատկերներ» ստեղծագործության հեղինակը, և ժողովրդական ո՞ր երգն է հնչում:

ՌՈԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
(ծնվ. 1939)

Ռոբերտ Ամիրխանյանը հայ անվանի կոմպոզիտորներից է: Նա գրել է «Դաշնամուրի կոնցերտ», «Լարային կվարտետ», «Քաղքենին ազնվական» օպերետը, «Ատամնաբույժն արևելյան», «Ալադինի կախարդական լապտերը», «Շախ և մատ» մյուզիքլները, երգաշարեր, երգեր, կինոերաժշտություն: Նրա ստեղծագործության նշանակալից մասը կազմում են հիանալի երգերը: Դուք գիտեք նրա «Դինգ–դոնգ» մանկական մյուզիքլը, որը ներառում է «Օրորոցային», «Դինգ–դոնգ» և այլ սիրված երգեր:

Սովորեք

Սովորեք Ռոբերտ Ամիրխանյանի «Նոր տարվա հանդես» ուրախ երգը և կատարեք Նոր տարվա հանդեսին:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՀԱՆԴԵՍ

Պատրաստել ենք մենք Նոր տարվա հանդես,
Նոր տարվա հանդես, Նոր տարվա հանդես,
Հագուստներ ունենք, դիմակներ պես–պես,
Դիմակներ պես–պես, դիմակներ...

Կրկներգ
Հյուր կգա շուտով Ձմեռ պապին,
Ներս կգա մեծ պարկը շալակին,
Ձյունանուշն էլ՝ երգը շուրթերին,
Շուրջը կխմբի ժիր մանուկներին:
Թի՛կ, թա՛կ, մանուկնե՛ր, մեծ շրջա՛ն բացեք,
Մեծ շրջա՛ն բացեք, մեծ շրջա՛ն բացեք:
Ինչպես զանգակներ, զանգակներ ուրախ,
Երգով ու պարո՛վ զնգացեք:

Զարդարել ենք մենք եղևնին պայծառ,
Տոնածառը մեր, տոնածառը մեր,
Դուրսը՝ ձյուն–ձմեռ, իսկ ներսում պայծառ,
Իսկ ներսում՝ անթիվ ծաղիկներ:

Կրկներգ
Հյուր կգա .....

Ունկնդրեք

Ունկնդրեք «Դինգ–դոնգ» և «Օրորոցային» երգերը «Դինգ–դոնգ» մյուզիքլից:

ԱՐԵԳ ԼՈՒՍԻՆՅԱՆ
(ծնվ. 1935 թ.)

Հայ անվանի կոմպոզիտոր Արեգ Լուսինյանը բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է: Նա գրել է սիմֆոնիաներ, լարային կվարտետներ, մանկական օպերաներ, խմբերգեր, ռոմանսներ, երգեր, դաշնամուրային ստեղծագործություններ: Կոմպոզիտորը նաև ստեղծել է երգերի շարք՝ նվիրված հայոց այբուբենի տառերին, որն անվանել է «Երաժշտական այբուբեն»: Յուրաքանչյուր տառի համար Նանսեն Միքայելյանը գրել է բանաստեղծություն, իսկ կոմպոզիտորը դրանց հիման վրա ստեղծել է երգեր, որոնք սիրելի են դարձել հայ մանուկներին: Արեգ Լուսինյանը նաև նման երգաշարեր է ստեղծել՝ նվիրված ռուսերենի՝ «Երգող այբուբեն», գերմաներենի՝ «Այբուբենը երգերում», և անգլերենի՝ «Անգլերենը սովորենք երգելով», այբուբենների տառերին:

Ունկնդրեք երգեր Արեգ Լուսինյանի «Երաժշտական այբուբեն» երգաշարից:

Ունկնդրեք

Սովորեք Արեգ Լուսինյանի «Երգ Ձյունանուշիկի և Ձմեռ պապիկի մասին» երգը:

Սովորեք

ԵՐԳ ՁՅՈՒՆԱՆՈՒՇԻԿԻ ԵՎ ՁՄԵՌ ՊԱՊԻԿԻ ՄԱՍԻՆ

Կարծես ծագեց մի նոր արև,
Ու բաց եղավ մի մեծ դուռ,
Ձմեռ պապին ասաց՝ բարև՛,
Եկել եմ ես ձեզ մոտ հյուր:

— Մոտի՛կ եկեք,— պապիկն ասաց,—
Կտամ մրգեր ու գրքեր,
Նրանց, ովքեր լավ են պարում,
Ովքեր գիտեն լավ երգեր:

Կրկներգ

Ձյունանուշի՛կ, դո՛ւ էլ արի,
Գալդ լինի՛ թող բարի,
Լույսի մի փունջ ժպիտ դարձած՝
Մեզ հետ մտի՛ր շուրջպարի:

Կրկներգ

Ձյունանուշի՛կ, դո՛ւ էլ արի,
Գալդ եղա՛վ շատ բարի,
Լույսի մի փունջ ժպիտ դարձած՝
Մեզ հետ մտար շուրջպարի:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ

Խաչբառ «Փաթիլ»



1. Երգ առանց բառերի:
2. Կոմիտասի դաշնամուրային պարերից:
3. Հնգագծի սկզբում դրվող նշան:
4. Հայկական ժողովրդական պար:
5. Ժողովրդական լարային աղեղնավոր նվագարան:
6. Կոմիտասի դաշնամուրային պարերից:

Խաչբառ «Ծաղիկ»



1. Մեծածավալ ստեղծագործություն մենակատար նվագարանի և նվագախմբի համար:
2. Ժողովրդական լարային նվագարան:
3. Ղ. Աղայանի հորինած երգը, որը դարձել է ժողովրդական:
4. Չորս կատարողից կազմված նվագախումբ:
5. Փայտե փողային նվագարան:
6. Ֆրանսահայ անվանի երգիչ, բանաստեղծ, երգահան:
7. Հայ հանճարեղ կոմպոզիտոր:
8. Ժողովրդական գութանի երգ:
9. Մեղեդու չափական կրկնվող հատված, որը հաջորդից անջատվում է ուղղահայաց գծիկով (գրել շրջագծված մասում):

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆ ՉԻ ՃԱՆԱՉՈՒՄ

Երկրորդ կիսամյակի ընթացքում դուք կունկնդրեք հայ կոմպոզիտորների այն ստեղծագործությունները, որոնցում օգտագործվել է այլ ժողովուրդների երաժշտություն: Կծանոթանաք հայազգի այն կոմպոզիտորներին, ովքեր ապրում և ստեղծագործում են Հայաստանից դուրս՝ աշխարհի տարբեր երկրներում՝ իրենց արվեստով ծառայելով այդ երկրների մշակույթին: Կլսեք նաև այլազգի կոմպոզիտորների գործեր, որոնց մեջ օգտագործված են հայկական ժողովրդական մեղեդիներ:

Ունկնդրեք

Ունկնդրեք հայկական «Քոչարի», ռուսական «Կամարինյան» և կովկասյան «Լեզգինկա» ժողովրդական պարեղանակները:

Համեմատելով տարբեր ժողովուրդների պարերը՝ դուք նկատեցիք, որ դրանք և՛ նման են, և՛ տարբեր: Նմանությունն այն է, որ երեքն էլ արագ, կրակոտ պարեր են և պարելու ցանկություն են առաջացնում: Սակայն դրանք տարբերվում են հնչերանգներով, որոնց շնորհիվ կարողանում ենք հայկական պարի երաժշտությունը տարբերել ռուսականից, ռուսականը՝ կովկասյանից:

Սովորեք

Սովորեք «Здравствуй, гостья–зима» ռուսական ժողովրդական երգը: Համեմատեք այն ձեր սովորած հայկական երգերի հետ և փորձեք որոշել դրանց նմանություններն ու տարբերությունները:

ЗДРАВСТВУЙ, ГОСТЬЯ–ЗИМА

Здравствуй, гостья–зима!
Просим милости к нам,
Песни севера петь
По лесам и полям.

Есть раздолье у нас,
Где угодно гуляй,
Строй мосты по рекам
И ковры расстилай.

Нам не стать привыкать
Пусть мороз твой трещит:
Наша юная кровь
На морозе горит.

Կան երաժշտական ստեղծագործություններ, որոնց երաժշտական լեզուն ոչ միայն հասկանալի է, այլև հոգեհարազատ է տարբեր ժողովուրդների համար: Դրա պատճառն այն է, որ դարեր շարունակ այդ ժողովուրդները, ապրելով կողք կողքի, կրել են մեկը մյուսի երաժշտական լեզվի ազդեցությունը: «Ազգերու փոխադարձ ազդեցությունն անուրանալի և անհերքելի փաստ է,— գրել է Կոմիտասը,— որովհետև անազդեցիկ մնացած ազգ չկա, յուրաքանչյուր ազգ ինչ որ չունի, ունեցողներեն պետք զգացած ժամանակ փոխ կառնե և կազգայնացնե»: Նման օրինակներ կան հայկական և վրացական հորովելներում, քաղաքային ժողովրդական երգերում: Դրանք հնչում են հայերեն և վրացերեն՝ մեղեդիների որոշակի փոփոխություններով: Օրինակ՝ «Ավարա», «Մուշա» երգերը հնչում էին հին Թիֆլիսի արհեստավորական թաղամասերում երկու լեզվով: Արամ Խաչատրյանը Դաշնամուրի կոնցերտում օգտագործել է «Ավարա» երգը, իսկ կոմպոզիտոր Մարտին Մազմանյանը «Մուշա» երգի հիման վրա ստեղծել է «Մայրիկին յազմա բերին» կատակային խմբերգը:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատված Արամ Խաչատրյանի «Դաշնամուրի կոնցերտից», ինչպես նաև Մարտին Մազմանյանի «Մայրիկին յազմա բերին» խմբերգը:

Հարցեր և առաջադրանքներ

- Ինչո՞վ են տարբերվում ձեր ունկնդրած պարերը:
- Ի՞նչ բնույթի է «Здравствуй, гостья–зима» ռուսական ժողովրդական երգը:
- Ձեռքի նշաններով կատարեք **լա** և **դո** տոնիկայով հնչյունաշարերը և ասացեք դրանց տարբերությունները:

ՍԱՅԱԹ–ՆՈՎԱ
(1712–1795)

Ուշ միջնադարի հայազգի նշանավոր աշուղ՝ բանաստեղծ, երգահան, երգիչ, նվագածու, Սայաթ–Նովայի երգերը հավասարաչափ հոգեհարազատ են Անդրկովկասի ժողովուրդներին, քանի որ նա միաժամանակ ստեղծագործել է և՛ հայերեն, և՛ վրացերեն, և՛ պարսկերեն: Դրանով նա մեծ նպաստ է բերել այդ ժողովուրդների մերձեցմանն ու մշակույթի զարգացմանը:

Սայաթ–Նովան (իսկական անունը՝ Հարություն Սայադյան) ծնվել է Թիֆլիսում 1712 թվականին: Սովորել է գրել, կարդալ հայերեն, վրացերեն, իմացել է նաև արաբական այբուբենը: 12 տարեկանից սովորել է ջուլհակի արհեստը: Երաժշտության հանդեպ սերը ժառանգել է ծնողներից, որն ի հայտ է եկել նրա մոտ մանկուց: Կատարելագործվելով աշուղական արվեստի մեջ՝ Սայաթ–Նովան շրջել է Մերձավոր Արևելքում, եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում և այլ երկրներում: Լայն ճանաչում ստանալով՝ մկրտվել է Սայաթ–Նովա անունով, որը պարսկերեն նշանակում է «երգի սիրահար» կամ «երգի որսորդ»:

Ունկնդրեք

Ունկնդրեք Սայաթ–Նովայի «Դուն էն գլխեն» երգը հայերեն և վրացերեն: Այնուհետև ունկնդրեք կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի «Երևանյան էտյուդներից» «Էնզելի» ստեղծագործությունը: Պատմեք ձեր տպավորությունները. ինչպիսի՞ փոփոխության է ենթարկվել «Դուն էն գլխեն» երգը Սպենդիարյանի ստեղծագործության մեջ:

Սովորեք

Սովորեք Սայաթ–Նովայի «Դուն էն հուրին իս» երգը:

ԴՈՒՆ ԷՆ ՀՈՒՐԻՆ ԻՍ

Դուն էն հուրին[1] իս, վուր[2] գէմի[3] կու զավթե[4],
Զունքի[5] ինձ զավթեցիր խափով, նազանի՛:
Արիվիլք, արիվմուտ, հարավ ու հյուսիս,
Չկա քիզի նման չափով, նազանի՛: } *2 անգամ*

Շատ մարթ քու էշխեմէն[6] կու դառնա եիզիդ[7].
Արի՛ մէ ռա՛հմ[8] արա, լավ կացի միզիդ[9].
Գուզիմ[10] թե համաշա[11] դամ[12] անիմ քիզիդ[13]
Սանթուրով, քամանչով, դափով[14], նազանի՛: } *2 անգամ*

1. Հուրի — ջրահարս
2. Վուր — որ
3. Գէմի — նավակ
4. Զավթել — նվաճել
5. Զունքի — քանի որ
6. Էշխ — սեր, էշխեմէն — սիրուց
7. Եիզիդ — անհավատ, հեթանոս
8. Ռահմ արա — խղճա
9. Միզիդ — մեզ հետ
10. Գուզիմ — ուզում եմ
11. Համաշա — միշտ
12. Դամ — ուրախ ժամանց
13. Քիզիդ — քեզ հետ
14. Սանթուր, քամանչա, դափ — նվագարաններ

Հարցեր և առաջադրանքներ

- Ինչի՞ շնորհիվ է, որ տարբեր ժողովուրդների երաժշտությունը սրտամոտ և հասկանալի է բոլորին:
- Ձեր իմացած հայ կոմպոզիտորներից ովքե՞ր են իրենց ստեղծագործություններում օգտագործել տարբեր ժողովուրդների երգեր:
- Սայաթ–Նովայի ո՞ր երգերն եք լսել:
- Ձեռքի նշաններով երգե՛ք լա–սի–դո–րե–մի–ֆա–սո–լա հնչյունաշարի ձայնաստիճանները:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ
(1871–1928)

Հայ երաժշտության դասական Ալեքսանդր Սպենդիարյանը հայ և ռուս կոմպոզիտորների բարեկամության և ստեղծագործական համագործակցության լավագույն ներկայացուցիչներից մեկն է: Նա սովորել է Պետերբուրգում՝ ռուս նշանավոր կոմպոզիտոր Նիկոլայ Ռիմսկի–Կորսակովի մոտ: Ալեքսանդր Սպենդիարյանը մտերիմ է եղել ռուս կոմպոզիտորներ Ալեքսանդր Գլազունովի, Անտոն Արենսկու, Ցեզար Կյուիի, աշխարհահռչակ երգիչ Ֆյոդոր Շալյապինի, գրողներ Մաքսիմ Գորկու, Անտոն Չեխովի հետ: Մ. Գորկու խոսքերով գրել է «Ձկնորսն ու փերին» բալլադը, ըստ Լերմոնտովի համանուն բանաստեղծության՝ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը: Ա. Գլազունովը Սպենդիարյանին համարել է հայ և ռուս ժողովուրդների հոգևոր կապերի կենդանի մարմնացումը:

Ծանոթանալով Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմին՝ Ալեքսանդր Սպենդիարյանը գրել է «Ալմաստ» օպերան, որը դարձավ հայ օպերային գրականության գլուխգործոցը: Նրա գրչին են պատկանում նաև «Ղրիմյան էսքիզներ» երկու սյուիտները, «Համերգային նախերգանք», «Համերգային վալս», «Երևանյան էտյուդներ» ստեղծագործությունները, հայկական, ռուսական, ուկրաինական և թաթարական ժողովրդական երգերի մշակումներ և այլն: Սպենդիարյանը մահացել է 1928 թ. Երևանում և թաղված է իր անունը կրող օպերայի և բալետի թատրոնի պուրակում:

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը: Կոմպոզիտորը երաժշտական գունագեղ միջոցներով վերարտադրում է ռուս մեծ բանաստեղծ Լերմոնտովի բանաստեղծությունում նկարագրված բնության պատ-

կերը՝ արևակեզ անապատում աճող երեք հպարտ արմավենիների ճյուղերի սոսափյունը և նրանց ստվերով հոսող սառնորակ առվակի խոխոջը: Երաժշտությունը պատմում է կատարված իրադարձությունների մասին, թե ինչպես հեռուներից զնգզնգալով եկավ ուղտերի քարավանը, պատսպարվեց արմավենիների ստվերում, հագեցրեց ծարավը առվակի ջինջ ջրով, ապա ապերախտ մարդիկ կացնի անողոք հարվածներով երեք արմավենիներն էլ կտրեցին, խարույկի մեջ այրեցին հարյուրամյա ծառերը, իսկ լուսադեմին քարավանը հեռացավ՝ թողնելով մարած խարույկի կայծկլտացող մոխիրը և շիկացած ավազներում անօգնական նվաղող առվակը:

Սովորեք

Սովորեք «Գնաց աշուն» ժողովրդական երգը, միաժամանակ պարային շարժումներով արտահայտեք երգի տրամադրությունը:

ԳՆԱՑ ԱՇՈՒՆ

Գնաց աշուն, եկավ գարուն,
Ձյունը հալվեց, լցվեց առուն:
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛, լե՛,
Ձյունը հալվեց, լցվեց առուն:

Արև ծագեց արևելքից,
Ծիլեր քաշեց գետնի տակից:
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛, լե՛,
Ծիլեր քաշեց գետնի տակից:

Ունկնդրեք

«Գնաց աշուն» երգը Ալեքսանդր Սպենդիարյանն օգտագործել է «Ալմաստ» օպերայում: Ունկնդրեք օպերայից այդ հատվածը և ասացեք, թե երգը ինչ փոփոխության է ենթարկվել:

Հարցեր և առաջադրանքներ

- Հայազգի ո՞ր կոմպոզիտորներն են երաժշտական կրթություն ստացել Հայաստանից դուրս:
- Ալեքսանդր Սպենդիարյանի ո՞ր ստեղծագործություններում է օգտագործված ժողովրդական երաժշտությունը:
- Ստեղծեք ռիթմական նվագակցություններ և նվագակցեք երաժշտական ստեղծագործությունների կատարմանը:

Արամ Խաչատրյանը «Գայանե» բալետում նույնպես օգտագործել է տարբեր ազգերի ժողովրդական երաժշտություն՝ արտահայտելով ժողովուրդների բարեկամության գաղափարը:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատվածներ «Գայանե» բալետից և ասացեք, թե որ ժողովուրդների երաժշտությունն է հիմքում ընկած:

Արամ Խաչատրյանը շատ է ճանապարհորդել: Նա եղել է տարբեր երկրներում, հանդես է եկել որպես կոմպոզիտոր և դիրիժոր: Դեռ երիտասարդական տարիներից հրապուրվելով իտալացի գրող Ռաֆայելլո Ջովանյոլիի «Սպարտակ» պատմահերոսական վեպով՝ Արամ Խաչատրյանը մեկնում է Իտալիա: Նա ուսումնասիրում է երկրի պատմությունը, իտալացիների կենցաղը, լինում այն վայրերում, որտեղ ժամանակին եղել է ստրուկների առաջնորդ Սպարտակը, և ստեղծում է «Սպարտակ» բալետի երաժշտությունը:

«Սպարտակ» բալետը այժմ էլ մեծ հաջողությամբ բեմադրվում է աշխարհի շատ երկրներում:

Ունկնդրեք

Ունկնդրեք Ֆրիգիայի և Սպարտակի զուգապարը «Սպարտակ» բալետից և պատմեք ձեր տպավորությունները:

Տեսարան Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետից

Սովորեք

Սովորեք «Ամպել ա բութա–բութա» երգը և կատարեք երկձայն՝ կանոնի ձևով:

ԱՄՊԵԼ Ա ԲՈՒԹԱ–ԲՈՒԹԱ



Ամպել ա բութա–բութա,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Կերածս կարմիր թութ ա,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Բարակ առու, զուլալ ջուր,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Մի տանձ կուզեմ՝ երկուս տուր,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Վարդ եմ քաղել մաղերով,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Փունջ եմ կապել խաղերով,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Հարցեր և առաջադրանքներ

- «Գայանե» բալետում ո՞ր ժողովուրդների երաժշտությունն է հնչում:
- Ո՞վ է «Սպարտակ» բալետի երաժշտության հեղինակը:
- Ո՞ւմ վեպի հիման վրա է գրվել բալետի լիբրետոն *(բովանդակությունը)*:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

Աշխարհով մեկ ցրված, հայրենիքից հեռու ապրող սփյուռքահայ երաժիշտներն իրենց գործունեությամբ ծառայում են ոչ միայն այն երկրին, որտեղ ապրում են, այլև հարստացնում են հայ արվեստը: Հիմնվելով իրենց ապրած երկրի երաժշտական լեզվի առանձնահատկությունների վրա՝ նրանք ստեղծում են այդ ժողովրդի հույզերն ու ապրումները արտացոլող երաժշտություն: Միաժամանակ ունենալով հայկական ոգի, ձգտելով հաղորդակից լինելու հայրենի երաժշտությանը՝ նրանք իրենց երաժշտական լեզվի մեջ դրսևորում են նաև հայկական գծեր: Այսպես ստեղծվում է երաժշտություն, որում տարբեր ժողովուրդների երաժշտության յուրահատկությունները միաձուլված են լինում այնպես, որ երբեմն դժվար է դրանց միջև սահման դնել: Սփյուռքի կոմպոզիտորների ստեղծագործությունները հոգեհարազատ են թե՛ հայերին, թե՛ այն ժողովուրդներին, ում կողքին ապրում և ստեղծագործում են նրանք: Այսօրվա հայ երաժշտության զարգացումը չի կարելի դիտել առանց սփյուռքի հայ երաժիշտների, նրանց ստեղծագործությունների: Հայրենիքի և սփյուռքի երաժիշտները միասնաբար ստեղծում են հայ ազգային երաժշտական մշակույթը:

Նշանավոր հայ կոմպոզիտոր Սերգեյ Բալասանյանը տաջիկական առաջին ազգային՝ «Վոսեի ապստամբությունը» օպերայի հեղինակն է: Ծնվել է Թուրքմենիայի մայրաքաղաք Աշխաբադում: 1935 թ. ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան: Նա ստեղծագործել է երաժշտական համարյա բոլոր ժանրերում: Սերգեյ Բալասանյանը համարվում է ժամանակակից տաջիկական թատերական երաժշտության առաջին դասական կոմպոզիտորը: Գրել է նաև «Շաքունթալա» բալետը՝ հնդկական թեմաներով, «Լեյլի և Մեջնուն» բալետը՝ արևելյան թեմաներով: Հայտնի են նաև նրա հայկական ժողովրդական երգերի մշակումները:

ՍԵՐԳԵՅ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ (1902–1982)

Ունկնդրե՛ք

Ունկնդրե՛ք հատված Սերգեյ Բալասանյանի «Լեյլի և Մեջնուն» բալետից և «Ես մի պուճուր հոտաղ եմ» դաշնամուրային մանրանվագը:

Կատարեք

Վերհիշեք «Հովիվ» երգը և ընկերների հետ կատարեք երկձայն:

ՀՈՎԻՎ

Հայկական ժողովրդական



Ես մի պուճուր հոտաղ եմ,
Հե՜յ, ջանեջան, ջա՜ն, ջանեջան,
Հոտաղ եմ:
Մեր սարերին մատաղ եմ,
Հե՜յ, ջանեջան, ջա՜ն, ջանեջան,
Մատաղ եմ:

Գառներս առնեմ, սար էլնեմ,
Հե՜յ, ջանեջան, ջա՜ն, ջանեջան,
Սար էլնեմ:
Հորս ծառին բար էլնեմ,
Հե՜յ, ջանեջան, ջա՜ն, ջանեջան,
Բար էլնեմ:

ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ
(ծնվ. 1937 թ.)

Հայտնի դիրիժոր, երաժշտական–հասարակական գործիչ Լորիս Ճգնավորյանը, 1989 թ. Իրանից տեղափոխվելով Հայաստան, իր կյանքը կապեց հայրենիքի հետ: Դառնալով ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը՝ նա ջանք ու եռանդ չխնայեց, որ 1990–ական թվականների դժվարին պայմաններում չմարի հանրապետության համերգային կյանքը և շարունակի ջերմացնել մարդկանց սրտերը:

Ճգնավորյանը հեղինակ է օպերային, բալետային, սիմֆոնիկ երաժշտության: Նա գրել է դաշնամուրային մանրանվագներ երեխաների համար: Հետաքրքրական է, որ իր կոնցերտներից մեկը գրված է այնպիսի մի արտասովոր նվագարանի համար, ինչպիսին է չինական ջնարը՝ փիփան:

Ճգնավորյանի՝ պարսկական թեմաներով գրված «Ռոստամ և Զոհրաբ» օպերան բազմիցս հնչել է Իրանում՝ նվաճելով պարսիկ ունկնդիրների սերն ու ճանաչումը և դառնալով հարևան ժողովուրդների մշակութային կապերի մերձեցման գրավականը:

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք հատված Լորիս Ճգնավորյանի «Ռոստամ և Զոհրաբ» օպերայից և պատմե՛ք ձեր տպավորությունները:

Սովորեք

Սովորեք «Ծաղի՛կ ջան» երգը: Փորձեք այն կատարել երկձայն:

ԾԱՂԻԿ ՋԱՆ

Հայկական ժողովրդական

Չափավոր



Ով որ քեզի մոտ կուգա,
Ձեռքերը շաղոտ կուգա,
Ջա՜ն, ծաղի՛կ ջան, ջա՜ն, ծաղի՛կ ջա՜ն,
Էս ի՛նչ անուշ հոտ կուգա:

Կատարեք

«Ծաղի՛կ ջան» երգը կատարեք ռիթմական նվագակցությամբ:



Նկատո՞ւմ եք, որ «Ծաղի՛կ ջան» երգի 1–ին և 2–րդ տակտերում կա ձեզ անծանոթ ռիթմական մոտիվ՝ ♩. ♪:

Դուք արդեն գիտեք, որ երբ նոտայի աջ կողմում դրվում է կետ, նրա տևողությունն ավելանում է նոտայի տևողության կեսի չափով:

Այսպես՝ 𝅗𝅥. = 𝅗𝅥 + ♩ 𝅗𝅥.

թա–ա թա թա–ա–ա
1 2 3 1 2 3

Երբ կետը դրվում է ♩ (թա) տևողության նոտայի կողքին՝ ♩. , նրա տևողությունը ավելանում է ♪ (թի) տևողությամբ:

Այսպես՝ ♩. = ♩ + ♪ ♩.

թա թի թա–ի

Որպեսզի ♩. (թա–ի) տևողությունը հնչի առանց ընդհատման, պետք է երգել **թա** վանկը, ապա՝ **թի** վանկի միայն **ի** ձայնավորը՝ **թա–ի**:

Այսպես՝ ♩. ♪

թա–ի թի

Այս ռիթմական մոտիվը կարելի է երգել և ձեռքով բախել այսպես.



Եթե «Ծաղի՛կ ջան» երգի մեղեդու հնչյունները գրենք հնգագծի վրա ըստ բարձրության՝ մեկը մյուսի հետևից՝ սկսելով առաջին ձայնաստիճանից՝ տոնիկայից, ապա կստանանք այդ երգի հնչյունաշարը.



Իսկ սանդղակի վրա այն կունենա այսպիսի տեսք.

Կատարեք ***Դո*** *տոնիկայի հնչյունաշարը երգեք ձեռքի նշաններով: Երգելիս աշխատեք ճիշտ ցուցադրել ոչ միայն ձեռքի նշանները, այլև սանդղակի ձայնաստիճանների միջև եղած բարձրությունները (մեկ և կես ձայնաստիճանները):*

Դո հնչյունաշարը կարելի է հնչեցնել նաև դաշնամուրի ստեղնաշարով.





Կատարեք ***Դո*** *հնչյունաշարի հիման վրա ստեղծված վարժությունը նոտաներով երգեք երկձայն:*



Կատարեք *Ձեռքի նշաններով երգեք երկձայն:*



ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ
(ծնվ. 1924 թ.)

Ֆրանսահայ բանաստեղծ, կոմպոզիտոր, երգիչ, կինոդերասան, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրը (Ազնավուրյան Վաղինակ Միքայելի) ծնվել է Փարիզում: Հայրը և մայրը շատ էին սիրում հայկական ժողովրդական, աշուղական և հատկապես Սայաթ–Նովայի երգերը: Այդ ոգով էլ մեծացրել են Շառլ Ազնավուրին: Նա դեռ 9 տարեկան էր, երբ հորինեց իր առաջին երգը: Ֆրանսիացի հայտնի երգչուհի Էդիտ Պիաֆը, նկատելով պատանի Շառլի կատարողական և ստեղծագործական ընդունակությունները, հովանավորում է նրան՝ իր հետ դուրս բերելով բեմահարթակ: Շուտով Շառլ Ազնավուրը համաշխարհային հռչակ է ձեռք բերում որպես երգիչ, բանաստեղծ և կոմպոզիտոր: Նա բազմաթիվ երգերի հեղինակ է: Նրա երգերը երգում է ողջ Ֆրանսիան:

«Ես լեզվով եմ ֆրանսիացի, հոգով հայ եմ»,— ասում է Շառլ Ազնավուրը: Շառլ Ազնավուրը համերգներով հանդես է եկել աշխարհի ամենամեծ բեմահարթակներում՝ ամենուրեք արժանանալով ունկնդիրների սիրուն և համակրանքին: Ստեղծագործական և կատարողական բացառիկ արժանիքների համար նրան շնորհվել է «Ֆրանսիական պատվո ժապավեն» հազվագյուտ տրվող մրցանակը, իսկ 1961 թ. նա արժանացել է «Ֆրանսիայի լավագույն դերասան» մրցանակին: Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական ընկերակցությունը, որի նպատակն է օգնել Հայաստանում 1988 թ. երկրաշարժից տուժած երեխաներին:

Ունկնդրեք

Ունկնդրեք Շառլ Ազնավուրի «Իզաբել», «Ավե Մարիա» և «Երկու կիթառ» երգերը: «Երկու կիթառ» երգը ստեղծվել է ռուսական գնչուների հայտնի երգի ազդեցությամբ, այդ պատճառով էլ կրկներգը կատարվում է ռուսերեն:

ԺՈՐԺ ԿԱՌՎԱՐԵՆՑ
(1932–1993)

Հայազգի կոմպոզիտոր Ժորժ (Տիրան) Կառվարենցը ծնվել է Հունաստանի մայրաքաղաք Աթենքում՝ գրող և երաժիշտ Գևորգ Կառվարենցի ընտանիքում: Ապրել և ստեղծագործել է Փարիզում: 50–ից ավելի կինոնկարների համար գրել է երաժշտություն: Իր ստեղծագործությունների մեջ օգտագործել է նաև հայ երաժշտությանը բնորոշ հնչերանգներ: Ժ. Կառվարենցը բարեկամական և ստեղծագործական սերտ համագործակցության մեջ էր Շառլ Ազնավուրի հետ, որի տեքստերով գրել է «Փարիզի կամուրջները», «Վենետիկ», «Լույսը», «Երբեք չի մոռանա» և այլ երգեր, որոնք սիրված են Ֆրանսիայում: 1988 թ. դեկտեմբերի 7–ին Հայաստանի ավերիչ երկրաշարժի արձագանքը եղավ «Քեզ համար, Հայաստան» երգը, որի բառերը գրել է Շ. Ազնավուրը, իսկ երաժշտությունը՝ Ժ. Կառվարենցը: Այդ երգը անմիջապես տարածվեց ամբողջ աշխարհում՝ դառնալով մարդասիրության, գթասրտության օրհներգ: Այն թարգմանվեց մի քանի լեզուներով: Փարիզում երգն արժանացել է «Ոսկե սուր» մրցանակին (1989 թ.): Երգը կատարեցին աշխարհի ամենանշանավոր երգիչները և նվագախմբերը: Երգի ստեղծման մասին Ազնավուրն ասել է. ««Քեզ համար, Հայաստան» երգի բառերը գրեցի երկրաշարժի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 8–ին: Այն Փարիզում ձայնագրեցինք էստրադայի և կինոյի 80–ից ավելի երգիչների և նույնքան էլ նվագախմբի անդամների մասնակցությամբ: Ովքեր այդ մասին իմացան, պատրաստակամությամբ եկան միասին երգելու՝ Միրեյ Մաթյոն, Պիեռ Ռիշարը, Ժիլբեր Բեկոն, Ադամոն, Մարինա Վլադին, Ջոնի Հոլիդեյը... նաև հայազգիներս՝ ես, դուստրս՝ Կատյա Ազնավուրը, Սերժ Ավետիքյանը, Ռոզի Արմենը, Ռոզի Վարդը... Ձայնասկավառակից գոյացած ամբողջ գումարը տրվել է Հայաստանի ֆոնդին»:

Ունկնդրե՛ք «Քեզ համար, Հայաստա՛ն» երգը և՛ ֆրանսիացիների, և՛ հայերի կատարմամբ:

Ունկնդրեք

ԱԼԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
(1911–2000)

Հայազգի ամերիկյան նշանավոր կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը (Ալան Հարությունի Չաքմաքչյան) ծնվել է քիմիայի պրոֆեսոր Հարություն Չաքմաքչյանի ընտանիքում: Ալանը ավարտել է Բոստոնի կոնսերվատորիայի դաշնամուրի և ստեղծագործական դասարանները: Նա գրել է օպերաներ, բալետներ, սիմֆոնիաներ, կոնցերտներ, կվարտետներ, երգեր և այլն: Ալան Հովհաննեսի երաժշտությունը համաշխարհային ճանաչում է վայելում:

Հայկական ոգով գրված ստեղծագործություններից են «Հայկական ռապսոդիան» լարային նվագախմբի համար, Կոնցերտ ալտի և սիմֆոնիկ նվագախմբի համար, որն անվանել է «Թալին», «Արթիկ» կոնցերտը գալարափողի համար, «Երրորդ սիմֆոնիան», «Անահիտ» ֆանտազիան, 12 հայկական ժողովրդական երգերի մշակումները դաշնամուրի համար և այլն: Հնդկաստան ուղևորության ճանապարհին թռչելով Արևմտյան Հայաստանի վրայով՝ տեսնում է Վանա լիճը և այդ տպավորության տակ գրում իր «Դաշնամուրի սոնատը»: Ալան Հովհաննեսը գրել է նաև երգեր և խմբերգեր Համաստեղի, Ավետիք Իսահակյանի, Վիլյամ Սարոյանի խոսքերով:

Լինելով մայր Հայաստանում, տեսնելով նրա ձեռքբերումները՝ կոմպոզիտորն ասել է. «Երևանն է զարմանալի, աննման քաղաք, իսկական երաժշտություն... ամբողջ հայ ժողովուրդն է զարմանալի... Ինձ համար մեծ պատիվ է տեսնել Երևանը՝ իմ պապերի հայրական տունը, իմ իղձերի հանգրվանը»:

Ունկնդրեք

Ունկնդրեք Ալան Հովհաննեսի՝ հայկական ժողովրդական երգերի թեմաներով գրված դաշնամուրի մանրանվագները և «Վասպուրական» երգը:

Սովորեք

Սովորեք ամերիկյան կոմպոզիտոր Ռիչարդ Ռոջերսի «Երաժշտության հնչյուններ» երգը համանուն մյուզիքլից:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

«Երաժշտության հնչյուններ» մյուզիքլից

Երաժշտ.՝ Ռիչարդ Ռոջերսի



Մի-քա-յելն էլ մեր բա-կում Ֆա, սո, լա է նը-վա-գում,
մի, ֆա,
Սո-ղո-մոնն է ձայ-նակ-ցում, Լա-վա-տես է ու սի-բուն,
սո, լա լա սի,
Սի-բա-նուշն էլ նը-բանց հետ Եվ եր-գում է, և՛ պա-րում:
սի, դո, Եվ եր-գում է, և՛ պա-րում:եր-գում,պա-
Դո, սի, լա, սո, ֆա, մի, ռե, դո: Ու-բախ է օ-բը մեր անց-նում:
բում: Դո, ռե, մի, ֆա, սո, լա, սի, դո: Ու-բախ է օ-բը մեր անց-նում:

Հարցեր և առաջադրանքներ

- Աշխարհի տարբեր երկրներում ապրող և ստեղծագործող ո՞ր հայ կոմպոզիտորներին գիտեք:
- Պատմեք Ալան Հովհաննեսի մասին:
- Ո՞ր կոմպոզիտորներին գիտեք, ովքեր ունեն ստեղծագործություններ՝ գրված ուրիշ ժողովուրդների երաժշտության հիման վրա:
- Ո՞վ է «Ռոստամ և Զոհրաբ» օպերայի հեղինակը:
- Ո՞վ է տաջիկական առաջին օպերայի հեղինակը:

ԾԱՆՈԹԱՑԵՔ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՍՏԵՂՆԱՇԱՐԻՆ

Դաշնամուրի ստեղնաշարն ունի սպիտակ և սև ստեղներ: Սպիտակ ստեղները հնչեցնում են երաժշտական յոթ հիմնական հնչյունները՝ ***դո, րե, մի, ֆա, սո, լա, սի:***

Սև ստեղներն ինքնուրույն անուններ չունեն: Նրանք իրենց անունները ստանում են հարևան սպիտակ ստեղներից: Այսպես՝ **դո** և **րե** սպիտակ ստեղների միջև տեղակայված սև ստեղնն ունի երկու անուն՝ մի դեպքում՝ **դո**–ի բարձրացում կես ձայնաստիճանով (տոնով), որ կոչվում է **դո դիեզ** (♯), մյուս դեպքում՝ **րե**–ի իջեցում կես ձայնաստիճանով (տոնով), որ կոչվում է **րե բեմոլ** (♭): Նույն սկզբունքը գործում է նաև մյուս սև ստեղների համար:



«Երաժշտական հնչյուններ» երգում դուք լսում եք դիեզներով (ֆա դիեզ, սո դիեզ) և բեմոլով (սի բեմոլ) հնչյուններ: Կա մեկ հնչյուն ևս՝ սի բեկար (♮): **Բեկարը** վերացնում է դիեզի և բեմոլի կատարած ձայնափոխությունը:

Եթե երգելու կամ նվագելու ժամանակ ճիշտ չկատարեք նշված հնչյունների ձայնափոխությունները, ապա երգի մեղեդին կհնչի սխալ: Դիեզը և բեմոլը հնգագծի վրա գրվում են նոտայից առաջ, բայց կարդացվում են նոտայից հետո:



Դիեզը և բեմոլը կոչվում են **ալտերացիայի նշաններ:**

Փորձեք «Երաժշտական հնչյուններ» երգի մեղեդին հնչեցնել դաշնամուրով:

ՄԻԽԱՅԻԼ ԻՊՈԼԻՏՈՎ–ԻՎԱՆՈՎ (1859–1935)

Այլազգի կոմպոզիտորները նույնպես մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հայկական երաժշտության հանդեպ: Ռուս կոմպոզիտոր Միլիյ Բալակիրևը դաշնամուրի համար մշակել է մի շարք կովկասյան, այդ թվում նաև հայկական ժողովրդական երգեր և պարեր: Մեկ այլ ռուս կոմպոզիտոր Միխայիլ Իպոլիտով–Իվանովը գրել է «Հայկական ռապսոդիա» սիմֆոնիկ նվագախմբի համար, մշակել «Կռունկ», «Ծիծեռնակ», «Զեյթունցիների քայլերգ» երգերը:

Սովորեք

Սովորեք «Զեյթունցիների քայլերգը»:

ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ ՔԱՅԼԵՐԳ



Արևն ելավ, զեյթունցինե՛ր,
Դե՛, ձի հեծնենք, առնենք զենքեր,
Ինչո՞ւ, ինչո՞ւ գլուխ ծռենք
Բռնավորին՝ մեր վիզ պարզած:

Կեցցե՛ Զեյթուն, ապրի՛ Զեյթուն,
Թող չտեսնի նա ստրկություն,
Քանի ունի մեզ պես որդիք,
Ապրի՛ Զեյթուն, կեցցե՛ Զեյթուն:



Ունկնդրեք

Ունկնդրեք հատված Միխայիլ Իպոլիտով-Իվանովի «Հայկական ռապսոդիայից» և պատմեք ձեր տպավորությունները:

Սովորեք

Սովորեք «Со вьюном я хожу» ռուսական ժողովրդական երգը: Երգեք և երաժշտության տեմպին ու բնույթին համապատասխան կատարեք պարային շարժումներ:

СО ВЬЮНОМ* Я ХОЖУ

Со вьюном я хожу, с золотым я хожу,
Я не знаю куда вьюн положить,
Я не знаю куда вьюн положить.

Положу я вьюн, положу я вьюн,
Положу я вьюн на правое плечо,
Положу я вьюн на правое плечо.

А со правого, а со правого,
А со правого на лево положу,
А со правого на лево положу.

*Вьюн — ձկան տեսակ

Ունկնդրեք

Սովորեք

Ունկնդրեք և սովորեք «Շողեր ջան» ժողովրդական երգը: Ուշադրություն դարձրեք դինամիկայի նշաններին: Կատարեք մաքուր հնչերանգով, գեղեցիկ ձայնով, արտահայտիչ:

ՇՈՂԵՐ ՋԱՆ

Մշակումը՝ Կոմիտասի

Չափավոր

p

Ամ - պել ա, ձուն չի գա - լի,

Շո - ղե՛ր ջան, *p* Սա - ռի - ցը տուն

չի գա - լի, Շո - ղե՛ր ջան:

mf *f* *mf* *f*

Դու շո - ռո - ռա՛, դուն օ - ռո - ռա,

p *pp*

Շո - ղե՛ր ջան, ամ - պի տա - կին

mf

ձուն կե - ռե - վա, Շո - ղե՛ր ջան:

Ամպել ա, ձուն չի գալի,
Շողե՛ր ջան,
Սարիցը տուն չի գալի,
Շողե՛ր ջան,
Դու շորորա՛, դուն օրորա՛,
Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կերևա,
Շողե՛ր ջան:

Սիրտս՝ կրակով լցված,
Շողե՛ր ջան,
Աչքերիս քուն չի գալի,
Շողե՛ր ջան,
Դու շորորա՛, դուն օրորա՛,
Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կերևա,
Շողե՛ր ջան:

Կատարեք *Ստեղծե՛ք ռիթմական նվագակցություն և նվագակցե՛ք «Շողե՛ր ջան» երգին:*

ԱՆԴՐԵՅ ՇՏՈԳԱՐԵՆԿՈ
(1902–1993)

Ուկրաինացի կոմպոզիտոր Անդրեյ Շտոգարենկոն մի շարք վոկալ ու սիմֆոնիկ ստեղծագործությունների հեղինակ է:

Լինելով Հայաստանում, մոտիկից ծանոթանալով հայկական ժողովրդական երաժշտությանը՝ նա գրել է լարային քառյակ՝ անվանելով «Հայկական էսքիզներ»: Այդտեղ Շտոգարենկոն օգտագործել է հայկական ժողովրդական երգեր:

Ունկնդրեք *Ունկնդրե՛ք հատվածներ «Հայկական էսքիզներ» լարային քառյակից: Ո՞ր երգերն են օգտագործվել լարային քառյակում և ինչպիսի՞ փոփոխության են ենթարկվել:*

Սովորեք *Սովորե՛ք «Веснянка» ուկրաինական ժողովրդական երգը:*

ВЕСНЯНКА

Стало ясно солнышко припекать, припекать.
Землю, словно золотом, заливать, заливать.
Громче стали голуби ворковать, ворковать.
Журавли вернулися к нам опять, к нам опять.

Հարցեր և առաջադրանքներ

- Այլազգի կոմպոզիտորների ի՞նչ ստեղծագործություններ գիտեք, որոնցում հնչում են հայկական մեղեդիներ:
- Կոմպոզիտորներից ովքե՞ր են իրենց ստեղծագործություններում անդրադարձել «Հո՛յ, իմ նազանի՛ յարը» ժողովրդական երգին:
- Թվարկե՛ք ալտերացիայի նշանները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Չորրորդ դասարանում երաժշտության ուղեկցությամբ դուք ճանապարհորդեցիք Հայաստանի և այլ ժողովուրդների երաժշտական աշխարհներում, ծանոթացաք ժողովրդական երաժշտությանը և կոմպոզիտորների ստեղծագործություններին: Նկատեցիք, որ երաժշտությունը համամարդկային լեզու է, որ տարբեր ժողովուրդների երաժշտության միջև իրոք չկա անանցանելի սահման, անջրպետ: Երաժշտությամբ մարդիկ ավելի լավ են ճանաչում միմյանց և բարեկամանում:

Դուք իմացաք նաև, թե ինչպես են կոմպոզիտորներն իրենց ստեղծագործություններում օգտագործում ժողովրդական երաժշտությունը կամ ստեղծում սեփական երաժշտությունը՝ նմանեցնելով ժողովրդականին:

Երաժշտության միջոցով դուք ծանոթացաք երաժշտական արվեստի այնպիսի տեսակներին, ինչպիսիք են օպերան, բալետը, սիմֆոնիան, ռապսոդիան, սյուիտը, կոնցերտը, և սկսեցիք ավելի լավ հասկանալ ու ճիշտ կողմնորոշվել երաժշտական աշխարհում:

Հետաքրքիր է իմանալ ձեր կարծիքը երաժշտության մասին.

- Երաժշտության ո՞ր տեսակներն են ձեզ դուր գալիս և ինչո՞ւ:
- Դուք ընդունո՞ւմ եք, որ երաժշտությունն արտահայտում և նկարագրում է կյանքն իր բազմազան երևույթներով, կարո՞ղ եք օրինակներ բերել:
- Ի՞նչ դեր են կատարում արտահայտչամիջոցները երաժշտության մեջ:
- Շարժումը և պարը օգնեցի՞ն ձեզ ավելի լավ ընկալելու երաժշտությունը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ

1. Խաչբառ *Լրացրե՛ք խաչբառը և նշված ուղղահայացում կարդացե՛ք հայ մեծանուն կոմպոզիտորի անունը:*



1. Ֆրանսիացի հայ կոմպոզիտոր:
2. Ամերիկահայ կոմպոզիտոր, «Վասպուրական» երգի հեղինակը:
3. «Ալբոմ թոռնիկի համար» ժողովածուի հեղինակը:
4. «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի հեղինակը:
5. «Սպարտակ» բալետի հեղինակը:
6. «Արարատյան դաշտի երգեր» շարքի հեղինակը:
7. Հայ կոմպոզիտոր, «Լեյլի և Մեջնուն» բալետի հեղինակը:

2. Բառաշղթա

1. Պարահանդեսային պար:
2. Ժողովրդական լարային կսմիթային նվագարան:
3. Ժողովրդական փողային նվագարան:
4. Հայ կոմպոզիտոր, «Դինգ–դոնգ» մանկական մյուզիքլի հեղինակը:
5. Երաժշտական հնչյունը գրառելու նշան:
6. Կոմպոզիտոր Խաչատրյանի անունը:

1			2		3				4								5			6			

3. Արդյոք ովքե՞ր են...

ՀՈ՛Յ, ՆԱԶԱ՛Ն

Հայկական ժողովրդական



ԹԱԳՎՈՐԻ՛ ՄԵՐ, ԴՈ՛ՒՍ ԱՐԻ

Հայկական ժողովրդական



ԽՆԿԻ ԾԱՌ

Հայկական ժողովրդական

Կայտառ

Մեր դը-ռա-նը՝ խնկ-կի ծառ, Գյու-լո՛ւմ ջան,

Ձեր դը-ռա-նը՝ խնկ-կի ծառ, Գյու-լո՛ւմ ջան:

ՍՈՆԱ ՅԱՐ

Հայկական ժողովրդական

Չափավոր

Խումբ

Սո-նա՛ յար, Սո-նա՛ յար, Սո-նա՛ սի-րուն,

մեներգ

Սո-նա՛ յար:

Վար-դա-վա-ռը գա-լիս ա,
Այ գյու-լում կաղ-չող աղ-ջիկ,

խումբ

Սո-նա՛ յար, Սո-նա՛ յար,

մեներգ

Ծա-ղի-կը ցրն-
Ձե-ռքդ ծըլ-վը-

խումբ

ծա-լիս ա, Սո-նա՛ սի-րուն, Սո-նա՛ յար:
լա-լիս ա:

ՋԱՏԻԿ

Հայկական ժողովրդական

Զվարթ

Տար-վա մեջ ու - րա-խա - լի Դու մի հատ ես

Ա՜յ մեր լավ Զա - տիկ, դու ես,

ա՜յ Զա - տիկ, Քեզ պես ա - նուշ, քաղ-ցրը օր,

ա՜յ Զա-տիկ, Քեզ պես քաղ-ցրը օր,

Չը-կա, չը - կա ոչ մի օր: Զա - տի՛կ, դու բա -

Չը - կա ոչ մի օր: Զա - տի՛կ,

1. 2.

րո՛վ ե - կար, Ծաղ-կած գա-րուն - քով ե-կար, // քով ե - կար:

1. 2.

դու ե - կար, գա - րուն - քով ե-կար, // քով ե - կար:

ԿՈՎԿԱՍԻ՛ ՔԱՋԵՐ

Քայլերգային

Կով - կա-սի՛ քա - ջեր, խրմ-բե՛ր կազ - մե -


ցեր, Քաջ Անդ - ռա - նի - կին
օգ - նու - թյան հա - սեր: Ա - ռած իր շուր -
ջը զին - վոր - ներ ուր - սուն՝
Մաք-ռե ճա-նա - պարհ նա դե - պի Սա - սուն:

ՔԵԼԵ՛, ՔԵԼԵ՛


Առույգ
mf
Կոմիտաս
Քե - լե՛, քե - լե՛, քել - քիդ մեռ - նեմ,
Քո գո - վա - կան խել - քիդ
p
մեռ - նեմ: Սի - ռա - վո՛ր լո - ռիկ,
Վի - ռա - վո՛ր լո - ռիկ, Լո - - -
ռիկ, Սե - վա - վո՛ր լո - ռիկ,
1
2.
Լո - ռիկ ջան: // Լո - ռիկ ջա՜ն:

ՆՈՒԲԱՐ

Հայկական ժողովրդական



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳ

Խոսք՝ Գ. Սարյանի
Երաժշտ.՝ Ա. Սաթյանի

Արագ, չափավոր

mf

Փա՜ռք տանք մեր ջը-րին ու հո - ղին,

Մեր հո-ղում կյան-քըն ստեղ-ծո - ղին,

Փա՜ռք տանք ցա-նո - ղին, փա՜ռք տանք հրն - ծո-ղին,

Փա՜ռք տանք աշ - խար - հին բա-րիք բե-րո-ղին:

Փառք տանք ցա-նո - ղին, փառք տանք հրն - ծո-ղին,

Փա՜ռք տանք աշ - խար - հին բա - րիք բե - րո -

1.2.

ղին:

(երգել բերանը փակ)

ՀՈ՛Յ, ԻՄ ՆԱԶԱՆԻ ՅԱՐԸ

Մշակումը՝ Թ. Ալթունյանի



ԾԻՏԻԿԻ ՍԵՐԸ

Խոսք՝ Հ. Աղաբաբի
Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Չափավոր

Ես սի-րում եմ կար-միր ա-րև, ա-րև,
Ես սի-րում եմ կար-միր ա-րև, ա-րև,
Ես սի-րում եմ կա-ճաչ տե-րև, տե-րև,
Ես սի-րում եմ կա-ճաչ տե-րև, տե-րև:
Ա՜յ ա-րե-վիկ, ծի՜վ-ծի՜վ, Ա՜յ տե-րե-վիկ, տի՜վ-տի՜վ...
Ա՜յ ա-րե-վիկ, ծի՜վ-ծի՜վ, Ա՜յ տե-րե-վիկ, տի՜վ-տի՜վ...

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԵՐԵՎԱՆ

Խոսք՝ Ա. Սահակյանի
Երաժշտ.՝ Ա. Բաբաջանյանի

Չափավոր արագ

mf

Դու ու-նես անց-յալ, քա-ղաք իմ, դա-րա-վոր անց-
յալ, Դու ե-ղար հա-յոց ամ-րոց-բերդ, մայր քա-ղաք դար-

ճար: Պատ-մու-թյան դա - ժան հող-մի մեջ շատ ցա-վեր տե -

սար, Բայց շո-ղաց կյան-քիդ մի նոր էջ, այս փառ-քին հա -

f կրկներգ

սար: Դու մեզ հա-մար նո - րա-շունչ Ա-նի ու Վան,

Հույս ու հա-վատ հա - յու - թյան, Քո սրբ-թու-թյամբ դու ա -

մեն հա-յի մեջ կաս, Մեր սի-ռե - լի՛ Ե - ռե - վան:

Խումբ

Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛,

լա, Քո սրբ - թու-թյամբ դու ա - մեն հա-յի մեջ կաս,

1. 2.

Մեր սի-ռե-լի՛ Ե - ռե - վան: // վան, Մեր սի-ռե - լի՛ Ե-ռե -

վան, Մեր սի - ռե - լի՛ Ե - ռե - վան:

ՃԱԽԱՐԱԿ

Խոսք և երաժշտություն՝ Ղ. Աղայանի
Մշակումը՝ Ա. Տեր–Ղևոնդյանի



ՉԵՄ ՈՒ ՉԵՄ

Խաղերգ

Հայկական ժողովրդական





ԼՈՒՍՆՅԱԿԸ ՅՈԼԱՅ, ԳՆԱՅ

Հայկական ժողովրդական



ՆՈՐ ՏԱՐՎԱ ՀԱՆԴԵՍ

Խոսք՝ Ն. Միքայելյանի
Երաժշտ.՝ Ռ. Ամիրխանյանի



ԵՐԳ ՁՅՈՒՆԱՆՈՒՇԻԿԻ ԵՎ ՁՄԵՌ ՊԱՊԻԿԻ ՄԱՍԻՆ

Խոսք՝ Ն. Միքայելյանի
Երաժշտ.՝ Ա. Լուսինյանի

Չափավոր, պարային

Կար-ծես ծա-գեց մի նոր ա-րև, Ու բաց ե-դավ
Չը-մեռ պա-պին ա-սաց՝ բա-րև, Ե-կել եմ ես
մի մեծ դուռ, Ձյու-նա-նու-շի՛կ, դո՛ւ էլ ա-ռի,
ձեզ մոտ հյուր:
Գա-լոդ լի-նի՛ թող բա-ռի, Լույ-սի մի փունջ
ժը-պիտ դար-ձած՝ Մեզ հետ մը-տի՛ր շուրջ-պա-ռի:
Լույ-սի մի փունջ ժը-պիտ դար-ձած՝
Մեզ հետ մը-տա՛ր շուրջ-պա-ռի:

ЗДРАВСТВУЙ, ГОСТЬЯ–ЗИМА

Русская народная песня

Обработка Н. Римского-Корсакова

Չափավոր

mf

Здрав-ствуй, го-стья зи-ма! Про-сим ми-лос-ти к нам
Пе-сни се-ве-ра петь По ле-сам и по-лям.

ԴՈՒՆ ԷՆ ՀՈՒՐԻՆ ԻՍ

Սայաթ–Նովա

Չափավոր հանդարտ

Դուն էն հու - րին իս, վուր

զե - մի կու զավ-թե, Չուն - քի ինձ զավ -

թե - ցիր խա - փով, նա - զա - նի՛:

Ա - րի-վիլք, ա - րիվ-մուտ, հա - բավ ու հյու-սիս,

Չը - կա քի - զի նը-մանց չա - փով, նա - զա - նի՛:

СО ВЬЮНОМ Я ХОЖУ

Русская народная песня

Спокойно

mp *mp*

Со вью - ном я хо - жу, с зо - ло -

тым я хо - жу, Я не зна - ю ку - да вьюн по - ло -

жить, Я не зна - ю ку - да вьюн по - ло - жить.

ԳՆԱՑ ԱՇՈՒՆ

Ժողովրդական երգ

Հանգիստ

Գը-նաց ա-շուն, ե-կավ գա-ղուն, Ձյու-նը հալ-վեց,

Լա, լա...

լը-վեց ա-ղուն: Վա՜յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,

Վա՜յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,

Ձա՜ն, լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛:

Ձա՜ն, լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛:

(լո՛,) (լո՛:)

ВЕСНЯНКА

Украинская народная песня

Не очень скоро

mf

Ста-ло яс-но сол-ныш-ко при-пе-кать, при-пе-кать.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ 5
ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ 6
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ 12
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 15
ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ 17
ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ 25
ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ 25
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 27
ՀՆՉՅՈՒՆԱՇԱՐ 33
ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ 37
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ 40
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ 53
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆ ՉԻ ՃԱՆԱՉՈՒՄ 54
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ 62
ԾԱՆՈԹԱՑԵՔ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՍՏԵՂՆԱՇԱՐԻՆ 73
ԱՄՓՈՓՈՒՄ 78
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ 79

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՈ՛Յ, ՆԱԶԱ՛Ն 80
ԹԱԳՎՈՐԻ՛ ՄԵՐ, ԴՈ՛ՒՍ ԱՐԻ 80
ԽՆԿԻ ԾԱՌ 81
ՍՈՆԱ ՅԱՐ 81
ՋԱՏԻԿ 82
ԿՈՎԿԱՍԻ ՔԱՋԵՐ 82
ՔԵԼԵ՛, ՔԵԼԵ՛ 83
ՆՈՒԲԱՐ 84
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳ 85
ՀՈ՛Յ, ԻՄ ՆԱԶԱՆԻ ՅԱՐԸ 86
ԾԻՏԻԿԻ ՍԵՐԸ 87
ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԵՐԵՎԱՆ 87
ՃԱԽԱՐԱԿ 89
ՉԵՄ ՈՒ ՉԵՄ 90
ԼՈՒՄՆՅԱԿԸ ՅՈԼԱՑ, ԳՆԱՑ 91
ՆՈՐ ՏԱՐՎԱ ՀԱՆԴԵՍ 92
ԵՐԳ ՁՅՈՒՆԱՆՈՒՇԻԿԻ ԵՎ ՁՄԵՌ ՊԱՊԻԿԻ ՄԱՍԻՆ 93
ЗДРАВСТВУЙ, ГОСТЬЯ–ЗИМА 93
ԴՈՒՆ ԷՆ ՀՈՒՐԻՆ ԻՍ 94
СО ВЬЮНОМ Я ХОЖУ 94
ԳՆԱՑ ԱՇՈՒՆ 95
ВЕСНЯНКА 95